Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2207

891.99
Z-15

XVI, 2.

40489

2207

Հրատարակութիւն Գ. Դալատեանի

ՑԵԿ. ԶԵՋԱՐԵԱՆ.

891.99
2-15/5

ԵԱԴ'ԱՍՏ

ՎՕԴ. ՄԻԿ ԱՐԱՐԻԱԾՈՎ

ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐՈՎ

1001
9269

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հանձնուած է
7/XI-1922
Հոգաբարձ Մաշտոց Հ.
Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

ԹԻՖԼԻԶ
Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի
1904

10 .06. 2013

Дозв. Цензурою. Тифлисъ, 27 Сентября 1903 г.

08 NOV 2011

ԻՒՐ ԱՄՈՒՍՆԱՑԱԾ

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻՆ

ՆԽԻՐՈՒՄ Է

ՀԵՂԻՆԱԿԸ

ՊՈՍ ԿՈՎ 8-Պ

ԴՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԲԱՐՍԵՂ ԱՀԱՐՈՆԵԱՆ, *երիտասարդ վաճառական.*

ԼԻԶԱ, *նրա կինը, կրթուած եւ զարգացած դեղեցկուհի.*

ՎԱՍԻԼ ՂԱՐԱԳԵՈԶԵԱՆ, *կիսակիրթ եւ փչացած երիտասարդ։*

ՄԱԹՈՍ, *լուռեցի ծառայ.*

Առաջին անգամ ներկայացել է Ռաշտում, 1900 թուին։

ԵԱԴ՚ԱՍՏ

ՊԱՏԿԵՐ Ա.

Բեմը ներկայացնում է Բարսեղ Ահարոնեանի կոկ և համեստ կահաւորած սենեակը։ Աջ կողմը դրած է զարդով ծածկած թախտ, մախմուր մութաքաներով և գեղեցիկ ասեղնագործ բարձերով։ Ձախ կողմը մի մեծ պահարան, որի հանդիսականներին նայող կողմը ապակիով է ծածկած (պահարանի ներսը կատարուածը երևալու համար)։ Դիմացի պատի վերայ դուռ, այս ու այն կողմը պատուհաններ։ Ձախ անկիւնում դուռ, իսկ աջ անկիւնում էտաժէրկա գրքերով և պատկերներով։ Պահարանի մօտ գրասեղան, երեսը դէպի հանդիսականները, վերան գրքեր, պատկերներ, թերթեր և լամպայ։ Պատերի մօտ, աղատ տեղերում աթոռներ։

ՏԵՍԻԼ Ա.

ԼԻԶԱ առանձին

(Նստած սեղանի առաջ, մեքենայաբար թերթելով մի գիրք).

ԼԻԶԱ.—Ես կարծում եմ բոլորովին սխալ է. մարդ եթէ մի անգամ անձնատուր եղաւ մի մոլութեան՝ այլ ևս նրան ուղղելը շատ դժուար է. ոչ թէ կինը, այլ, մեղայ Աստուծոյ, Աստուած էլ չի կարող նրան ուղղել։ Ես ևս համոզուած էի, թէ կինը, խոհեմ կինը՝ կարող է իւր ամուսնուն ուղղել, որչափ էլ նա մոլութեանց մէջ խորասուզուած լինի, բայց գործնականը հակառակն ապացուցեց։ Եւ մի՞թէ սա ամուսնական կեանք է. ամբողջ օրերով երեսը չեմ

տեսնում,—առաւօտեան դեռնոր լոյսը բացուած՝ գնում է կանտոր, ժամի չորսին գալիս է՝ հաց ուտում ու քնում, 7-ին վեր է կենում՝ թէյ խմում և եալլա՜հ. ուր է գնում՝ երևի ինքն էլ չը գիտէ. կէս գիշերից անց գալիս է, աչքերը ուռած, դեղնած և մի քանի կոշտ ու կոպիտ բառեր ծառայի, երբեմն էլ իմ հասցէին շուայլելուց յետոյ ընկնում է անկողնի վերայ, շատ անգամ էլ առանց շորերը հանելու քնում։ Եթէ երբ և իցէ շուտ է տուն գալիս, այն էլ՝ մի քանի սրիկաների հետ, նստում են սեղանի շուրջը և մինչև լոյս թուղթ խաղում։ Մարդու ականջները հարստահարում են, եթէ երբ և իցէ նրանց խօսակցութիւնն ականջն է ընկնում. էլ ինչ սրիկայական-հայհոյական սրախօսութիւններ, ինչ վիրաւորական նկատողութիւններ, աղմուկ, դալմաղալ, ջարդել, փշրել . . . կարծես մեր տունը այդ բոպէին փոխուած լինի մի սրճարանի։ Չը գիտեմ ինչ է պատահել այդ մարդուն, ուրբան ես նկատում եմ, ուրբան աղաչում, պաղատում, խնդրում,—նա, կարծես դիտմամբ, ինձ աւելի պայթեցնելու համար, աւելի ևս առաջ է գնում։ Չը գիտեմ ինչ պիտի լինի մեր վերջը։ (*Լռութիւն. մտնում է Մաթոսը եւ մնում կանգնած, աննկատելի*)։ Աստուած, երբ մարդկանց յոյսը ամեն կողմից կտրւում է, Քեզ են դիմում, կամ ինձ մահ տուր, կամ դարձրու Բարսեղիս այդ չար ճանապարհից. . .

ՏԵՍԻԼ Բ.

ՄԱԹՈՍ եւ ԼԻԶԱ

ՄԱԹՈՍ (*Ցառաջ գալով եւ յետ-յետ քաշելով*) Խանը՞մ, ա՜ խանըմ . . .

ԼԻԶԱ—(*սթափելով*) Վա՜, Մաթոս, դու ես։

ՄԱԹՈՍ—Հրաման քեզ, խանըմ։

ԼԻԶԱ—Հը՜, ինչ ես կամենում։

ՄԱԹՈՍ—Ոչինչ . . . հըլէ . . . մի բան պտեմ ասիլ, հըմա . . .

ԼԻԶԱ—Հը՞, դէ էլ ինչու ես կակազում։

ՄԱԹՈՍ—Դէ, ախըը . . .

ԼԻԶԱ—(*Ուշադրութիւնը լարելով ղէպի նա*) Հ՞ը ինչ է պատահել, մի դուցէ աղէդ . . .

ՄԱԹՈՍ—Չէ, չէ, խանըմ ջան, խի՞ ես սրտաճաք ըլում, աղէն, փառք Աստծու, սաղ-սրլամաթ ա։

ԼԻԶԱ—Դէ ասիր տեսնեմ, էլ ինչու ես քաշվըշում։

ՄԱԹՈՍ—Ախըը . . . հլէ ըմանչում եմ . . .

ԼԻԶԱ—(*Աւելի եւս լուրջ կերպարանք առնելով*) Ի՞նչպէս . . .

ՄԱԹՈՍ—(*Քաշվշելով*) Դէ, խանըմ ջան, դու որ կաս՝ հլէ իմ մէրն ես, իմ քուրը, իմ ճկատի մեռօնը, իմ բէրնի սրբութինը . . ը՜ . . ը՜ . .

ԼԻԶԱ—Ես ոչինչ չեմ հասկանում։

ՄԱԹՈՍ—Դէ, հլէ ես էլ մարդ եմ, ես էլ փափախ եմ ծածկում, աբուռ ունիմ։

ԼԻԶԱ—Է՞, յետոյ . . .

ՄԱԹՈՍ—Եղնայ էլ էն, որ մի Լօռի էր, մի Մաթոս, հրմի ըստեղ նոքար եմ էլել, օչով մհալ չի գնում, մըրդատեղ չի գնում։

ԼԻԶԱ—Է՞, եկբայր, ես քո սիրտը չունիմ, եթէ մի բան ունիս՝ ասիր, թէ չէ՝ ինձ հանգիստ թող, դուրս գնա։

ՄԱԹՈՍ—Խմ՞ ես չըրանում, խանըմ ջան, ուզում չես՝ ասիլ չեմ, կէթամ։ Զաթի իմ բախտը իմ հետ ա։ (Ուզում է դուրս գնալ)։

ԼԻԶԱ—Մաթոս, մի գնալ, սպասիր, ես գիտեմ որ դու լաւ տղայ ես, բայց մի բան ասածդ ժամանակ՝ երկարացնում ես, եօթը գեր հէրիաթ շինում. դէ ասիր տեսնենք, ինչ էիր ասում։

ՄԱԹՈՍ—Հա, էն ի ասըմ, որ ես էլ մեր երգրում մի մարդ եմ, ես էլ արուեր, նամուսի տէր եմ, իմ թասլիբս տանիլ չի էգ ղայդի բաներ։ Մի օր հեռաբս բռնած վօխտրս մի բամփաչիկ կըտամ, աչքերի լիսը ոտքերի աղարը կընկնի։

ԼԻԶԱ—Ախար ասիր տեսնեմ ինչ ես ասում, ումը կըտաս, ինչու։

ՄԱԹՈՍ—Խանըմ, վալլա՞հ, շատ դէշ մարդ ա։

ԼԻԶԱ—Ախար ով։

ՄԱԹՈՍ—Ա՞յ, էն «ֆռանգի թաղին»։

ԼԻԶԱ—Ֆռանգի թաղին . .

ՄԱԹՈՍ—Հա է, էն որ աչքերը շուշից ա. Ասուած ըթէնց կը քօռացնի է, մեռնիմ Նրա դարգեահին։ Խանըմ ջան, եանի էն Սըբ-Սարգիսը գիդենայ՝ մեղք ա ձեր շէմքը, որ ըթէնց հէյվարէքը տուն են մտնում։

ԼԻԶԱ—Հը, Մաթոս, քեզ ինչ է արել պարոն Ղարագեօզեանը։

ՄԱԹՈՍ—Էն, հեռի լըսողանց, հեռի քու ճկատի մեռնից, ում չունն ա, որ ինձ բան անի. էն ժամը, ձեր ահը չըլի՝ ոտիս տակը կըտամ, ոտիս-մոտիսը քեալաջօշ կանեմ, ինձ լօռրցի Մաթոս կասեն։

ԼԻԶԱ—(Առանձին) Այս գռեհիկը, իւր բոլոր պարզութիւններով՝ հազար անգամ բարձր է իմ Բարսեղից, հազար անգամ աւելի պատուաղգած։ (Նրան) ճիշտ ես ասում, Մաթոս, իսկապէս այժմ մեր տունը հէյվարաների որջ է դարձել։

ՄԱԹՈՍ—Չէ, խանըմ, վալլա՞հ, ես դրա ճաշը մի օր էփիլ պտեմ, թէկուզ ինձ կառտօժ տանեն։

ԼԻԶԱ—Երևի, Մաթոս, դու առանձնապէս մի բան ես նկատել նրանից։

ՄԱԹՈՍ—Եա՞, բա ես քեօռ եմ, եա հայվան. հա՞յ-հու, շորերս ա հին, խելքս էլ խու հին չի։

ԼԻԶԱ Ասիր տեսնեմ, Մաթոս, ինչն է պատճառ քո այդչափ լարուելուն։

ՄԱԹՈՍ—Չէ, խանըմ, դու ըլլես էն Գուեղայ Սըբ-Սարգիսը՝ զօռիլ մի, կարայ չեմ ասեմ. էգ ղղա համարձակութինն էլ մի բան չի, իմ արուռը խու չունը չի կերել, որ քու ըղաքին էրեսս էղղա բաց ըլի։ Ամա էսղդարն ասեմ, որ դրան մի օր

հլէ թափիկներիս տակն եմ տալու, էնդգա կոխ տամ, որ ֆռանցուզէվար մնգստայ։

ԼԻԶԱ—Չէ, Մաթոս, այդպիսի բան չանես. հօ գիտես, որ աղէդ նրա մօտիկ ընկերն է, էլ ձեռքիցը չես կարող ազատուել։

ՄԱԹՈՍ—Խանըմ ջան, քեզանից լաւը չըլի՝ աղէս էլ լաւ մարդ ա, հըմա ափսո՞ւս որ իր խէրըն ու շառը հըսկանըմ չի, խելքը տուել ա չորս ըչքանի գեաղա-գիւղէնուն։ Խանըմ ջան, էնդրդա չըրանում ա վրէս, ուշունցնի ա տալի, վօխտ-վօխտ էլ դուռթմայ ա տալի վզակոթիս, խօսըմ չեմ, դժարս չի գալի, այնըմս գրձըմ չեմ, համա որ էդ թուլունգու հետ տէնում եմ ստօլի կշտին կողք-կողքի նստած, հէնց եմ գիդում ինձ գիւլլով տալիս են։ Մի բան էլ ասեմ, խանըմ ջան, աղին ճամբահան անող էլ էտա հա, էտ էլ իմանաս, ես լաւ եմ բըրավուրդ արել։ Հըմի դուք գիտէ՞ք։

ԼԻԶԱ—Լսիր, Մաթոս, տեղ չերթաս, սպասիր մինչև աղէդ կըգայ, թէ չէ՝ էլի դալմաղալ կըսարքի։ Այդ վառարանն էլ վառի,—թող խօսելու առիթ չըգտնի։ Եթէ կը հարցնի, ասիր՝ ես երկար սպասեցի նրան չեկաւ, մտածեցի՝ գուցէ ուրիշ տեղ է ճաշի, ես գնում եմ մի փոքր հանգստանամ։ (*Դուրս է գնում*)։

ՏԵՍԻԼ Գ.

ՄԱԹՈՍ առանձին

ՄԱԹՈՍ—Հա՞յ քօռանաս դու, որ քօռացել ես։ Հլէ մարդ էլ ըսէնց պատուական կնիկը կը թողնու աչքը ճամփին, ինքը լունդ ու լավաղների հետ վէլլամիշ կըլլի։ Փո՞ւ, փիրըդ անըծի փոր, գօռբէգօռ ըլլի քու մգոնողը։ Քանի՞-քանի՞ մարդու էշ ես դարձնում, քանի իշի էլ մարդ։ (*Կեղծ ծիծաղ*) Հը՞, հը՞, հը՞ . . . Տօ, բա որ էն ֆռանգի թաղու վրիցը չուլը վէկալնունք, շուշէքը աչքերից հանենք, բա մի նօխտա չեմ դնիլ գլուխն ու տանիլ ջուրը, ծարաւ ետ բերիլ։ Հըմա հըմի չուլը վրէն ա գձել, մըրդամէջ ա մտել, չիմն էլ բարի լիս են տալի, մըրդատեղ են դնում։ Վա՛յ չարխի ֆալաք, վա՛յ . . . Էրնակ մի խօսալ էլ ա իմանայ, ջհանդամը. խամ ղօդուզի նման ինքն իրան տրտընգի ա տալի։ Վօխտ-վօխտ էլ մարդու հընէնց ա մտիկ տալի՝ կասես կալիցը վախս տւած աշառ ըլի։ Ը՞հ, մի լաւ ուռի ճիպոտ տան ձեռս, ասեն դրան պար ածի. ձեր արևը, հընէնց մի արջապար ածեմ, էնդայդի ուլքի թռցնեմ, որ հըսկանայ թէ ուրըշի նամուսին խէթ աչքով մտիկ տալը, յընգօր օղլուշպին նամարդութին անելը ոնն ա։ (*Գնում է փայտ բերում եւ լցնելով քուփարը, մի ծնկով շոքում է*)։ Աղէս, ղորդ ա, շար ա, տղամարդ մարդ ա, հըմա իմանում չի էդ օգոստոսի մաղը թափած աղէսի միտքը . . . Թէ կիմանա՞յ . . . Ամա որ-դիան իմանայ է՞, քանց Քրիստոսի էշը միամիտ ա։

Խանըմս էլ միամիտ ա. հրմա ես իմ փոդին՝ սուրբ ա, սուրբ։ Ասում են ուսում առած կնանիքը ըրեսրաց են ելում, հրմա սո՛ւտ ա, թէ որ չիմն էլ ըսէնց են։ Եանի, Աստուած ոչ անի, մենք որ սրա մարդի արածը մին օր անենք, ըստաս մեր կնանիքը մեզ տուն էլ չի թողուն։ Էվալլա՛ կնիկ, էսղըդա էլ համբերուլթին։ (*Դուրը թխկացնում են դրսից*) Վա՛, էս ով ա առանց դանդը քաշելու տուն ա էկել։ (*Ներս է մտնում Վասիլ*)։

ՏԵՍԻԼ Դ.

ՄԱԹՈՍ ևՎԱՍԻԼ

ՎԱՍԻԼ—Ը՞—Էյ, ա՛յ տղայ, աղէդ տանը չի։

ՄԱԹՈՍ Իմ անըմը Մաթոս ա . . .

ՎԱՍԻԼ—Հ՞ը, ապուշ, քեզ բան եմ հարցնում, Մաթոս ա թէ Թաթոս՝ իմ գործը չի, ը՞ . . .

ՄԱԹՈՍ (*Դողմ*) Թէ ասըմ եմ բռնեմ մի լաւ քլօլե՛մ, նալլաթը քեզ չար սատանա՛յ։

ՎԱՍԻԼ—Հ՞ը, ինչ ես մրթմրթում, է՛յ, աւանակ։

ՄԱԹՈՍ—Նալլաթը քեզ չար սատանա՛յ . . .

ՎԱՍԻԼ Է՛յ, ապուշ, չես հասկանում, աղէդ տանը չի, որտեղ է խանումդ։

ՄԱԹՈՍ—Է՛յ, բերնիդ գեօրա խօսե՛ս, քու ինչ բանն ա, թէ խանըմըս որդի ա, աղին ես հարցընում՝ տանը չի։

ՎԱՍԻԼ—Հ՞ը, պատասխան տուր, յիմար։

ՄԱԹՈՍ—Է՛յ, ես քեզ ասըմ եմ արուռովդ

ռադ ըլես ըստխանց, հէրիք ա էս տան մէջը զըլմաղալ գձես, մարդ ու կնիկ իրար աչքից հանես . . .

ՎԱՍԻԼ—Դա՛, այդ խանումիդ սարքածն է, այ՛, այ՛, այ՛, հասկանում եմ. շատ լաւ, շատ բարի, տրէ բիէն. ես այդ բոլորը ապայիդ կասեմ և վաղն և եթ քեզ, պարոն աւանակ, այստեղից դուրս կըվռնդեն։ (*Դուրս է գնում*)։

ՄԱԹՈՍ—Նալլաթը քեզ չար սատանա՛յ . . . «Խանումըդ որտեղ ա», զալամներին մտիկ արա։ Մէկ ասի՝ բռնի տրսրի՛, մէկ էլ ասի՝ լաւուլթին չունի, կաց մի աղին էլ հրսկացնեմ բանի էուլթինը, եղնայ։ (*Ներս է մտնում Լիզա*)։

ՏԵՍԻԼ Ե.

ՄԱԹՈՍ ևԼԻԶԱ

ԼԻԶԱ—Մաթոս, այն ում հետ էիր խօսում։

ՄԱԹՈՍ—Ես ինչ եմ գիդըմ, խանըմ ջան, էլի էն փռանգի թաղին էր. էկել ա ինձ հետ մեր տանը մէջ կռիւսն ա տալի։

ԼԻԶԱ—Ի՞նչպէս թէ կռիւս է տալի։

ՄԱԹՈՍ—Ես ինչ եմ գիդըմ. ասըմ ա խանըմդ որդեղ ա. ասա, թուլա, դու խանըմի թայն ես, ես խանըմի հետ ինչ գործ ունիս։

ԼԻԶԱ—Հօ չանպատեցիր, Մաթոս, գուցէ ասելիք ունէր։

ՄԱԹՈՍ—Ի՞նչ ասելիք, խանըմ ջան, հեռի լսողանց, նա ում չունն ա, որ քեզ ասելիք ունենայ։ Քեզ

տողրուսի, խանդմ, իմ գլուխը վէ չի կանուլ, որ դու ըթէնց լաթը-լուլթի հետ խօսաս։

ԼԻԶԱ – Բայց, Մաթոս, քաղաքավարութիւնը պահանջում է մարդկանց կանոնաւոր կերպով ընդունել և քաղաքավարի ճանապարհ ձգել։

ՄԱԹՈՍ – Խանդմ ջան, ես որ մի տան մի կտոր հաց կէրայ, էն տան նամուսն էլ իմն ա, ես էն տան օղլուշաղին իմ մէր ու քուրից ջըգիլ չեմ։ Էլ քաղաքաղութիւնը-զադը գիդըմ չեմ։ Ես տէնըմ եմ, որ էդ մարդը լաւ մարդ չի, ուզում չեմ հըլէ որ իմ տունը մտնի։ Ասած ա՝ նամուսը գձեցին շան ըղաքը, կէրաւ ոչ։ Հըմի դուք էք իմանըմ։ Ես աղին էլ մի քանի խօսք պտեմ ասիլ, թէ որ լսեց, խու լաւ, թէ՝ լսեց ոչ—ես էստեղ կարալ չեմ կէնամ։

ԼԻԶԱ (*կողմ*) Դռեհկութիւն, բայց և նահապետական սրբութիւն . . . որքան մաքուր և ապականութիւնից ազատ վարք ու բարք ունին սոքա . . .

(*Դուրս է գնում*)։

ՏԵՍԻԼ Զ

ՄԱԹՈՍ առանձին

ՄԱԹՈՍ—Զէ, ես ըստեղ կէնալ չեմ . . . Վա՜յ, վա՜յ, վա՜յ, Սոդոր-Գորոմ ա էլի։ Տօ, մարդ էլ մտնի մնի տունը, նրա հետ աղ ու հաց ուտի ու նրան մուխանաթութիւն, անի։ Ադա ասիսոս չի մեր Լօռին ու Ղազախը. էնդուր էր մեր օղորմա-

ծիկ Տէր-Յարութիւնն ասում «որդեղ քաղաք ա, ընդեղից Աստած ձեռն ա քաշել»։ (*Բուխարը վառում է*) Թէ ասեմ խանդմս հըսկանում չի ֆռանգի թաղու միտքը՞,—դէ ես ասի էլի, դրանից պարզն էլ ինչ ասեմ։ Զէ . . . հըսկացա՛ . . . ամա դէ բա խի՞ չի մարդին ասըմ . . . Է՞հ, դէ ես ինչ եմ իմանում սրանց բաները . . . Զէ, ես իմ գիտցածն եմ անելու. աղիս պտեմ ասի՝ ըսէնց, ըսէնց, ըսէնց . . . Ա՜խ, մէ դատաստանն ինձ տայ, ես եմ իմանում թէ ոնց պար կածեմ . . . Ամա չէ, աղէս գըզաղած մարդ ա, ըւատաս սուս ու փուս խանչալը փորը կոխի։

ԲԱՐՍԵՂ – (*Դրսից*) Մաթոս, ա՜յ տղայ Մաթոս, ա՛յ տղայ՝ ուր ես կորել։

ՄԱԹՈՍ –(*Մի փոքր այլայլած*) Էկաւ, հըմի անմեղ տեղը կըբաշլայի ուշունցնին։

ԲԱՐՍԵՂ—(*Մտնելով*) Ա՜յ ոչ ու փուշ, խլացել ես . . .

ՄԱԹՈՍ – (*կողմ*) Էս էրկու ուշո՞ւնց։ (*Նրան*) Աղա՛, ես հըլէ բուխարը . . .

ԲԱՍԵՂ – Զայնդ կտրի, յիմար, հիմա կսկսի երկար ու բարակ պատմութիւններ անել։

ՄԱԹՈՍ – Այո՛վ . . .

ԲԱՐՍԵՂ Ինչ այո՛, ապուշ։

ՄԱԹՈՍ – Ո՛չ։

ԲԱՐՍԵՂ—Խելագարուել է այս մարդը։ Ի՞նչ ես լիմար-յիմար այո՛-ներ ու ոչ-եր շռայլում, իսկի

հասկանում ես ասածդ, սարի արջ։

ՄԱԹՈՍ—Ես էլ եմ կրակն ընկել, աղա ջան, «այո՛» եմ ասում, չրրանում ես, «ոչ» եմ ասում՝ չրրանում ես, ուրիշ բան եմ ասում՝ թողում չես թէ խօսամ, ես ո՞ր ջուրն ընկնեմ է՞։

ԲԱՐՍԵՂ—Ջհանդամի վերի պուճախն ընկիր . . .

ՄԱԹՈՍ—Այո՛։

ԲԱՐՍԵՂ—Դարձեա՛լ։

ՄԱԹՈՍ—Ո՛չ։

ԲԱՐՍԵՂ—Հօռ ու ցաւ, դուրս կորի։

ՄԱԹՈՍ—(*կողմ*) Թամամ ընկնաւոր ա աղէս (*ուզում է դուրս գնալ*)։

ԲԱՐՍԵՂ—Լսիր, է, բռի արջ, այստեղ արի։

ՄԱԹՈՍ—Չէ՛, էլի վզատակիս դուռթու ա տալու։ Եա՜ Սրբբբհան . . . (*յետ է գալիս*)։

ԲԱՐՍԵՂ—Լսիր, խենթուկ, քեզ մի բան եմ հարցնելու, թէ ուզիզը չես ասել՝ շանսատակ եմ անելու, հասկացա՞ր։ Խանումդ այսօր տանից դուրս է գնացել։

ՄԱԹՈՍ—(*կողմ*) Էրաղ ա տէհել։ (*Ներսն*) Խի՞ չես իրան հարցնում, աղա։

ԲԱՐՍԵՂ—Զայնդ կտրիր, հայվան, այդ իմ գործս է։

ՄԱԹՈՍ—Ես առաւօտը հըլէ գնացի բազար, մի քիչ միս, կանաչի, հաւ . . .

ԲԱՐՍԵՂ—(*մօտենալով եւ թեթեւ զարկելով վզատակին*) Էլի սկսեցիր եօթը տարւայ պատմու-

թիւններ անել. ինչ-որ հարցնում եմ՝ «այո՛» կամ «ոչ», թէ չէ՝ հոգիդ կը հանեմ։ Խանումդ այսօր կէսօրի ժամանակ տանից դուրս չէ գնացել։

ՄԱԹՈՍ—Ո՛չ։

ԲԱՐՍԵՂ—Դու հաստատ գիտես։

ՄԱԹՈՍ—Այո՛։

ԲԱՐՍԵՂ—Սուտ ես ասում, լիմա՛ր։

ՄԱԹՈՍ—Այո՛։

ԲԱՐՍԵՂ—Դարձեա՛լ սկսեցիր կապկութիւններդ։

ՄԱԹՈՍ—Այո՛։

ԲԱՐՍԵՂ—Քեզ բան եմ հարցնում, «այո՛»-ներով մի ռմբակոծիր ինձ։

ՄԱԹՈՍ—(*Կողմ*) Նալա՜թ քեզ չար սըտանայ։ (*Ներսն*) Ախը՛ր, աղա, ո՞չ թողում ես մըրդավարի խօսամ, համէլ չորըմ ես բօղասիս, թէ խօսիր, ո՞ր անեմ, մլորւելեմ։

ԲԱՐՍԵՂ—Խօսիր, ապուշ, միայն մի բան ասիր, որ մարդ բան հասկանայ։

ՄԱԹՈՍ—Աղա՛, քո աղիզ արեր՝ ըսօր խանըմը տանից դուս չի գնացել. չէել հըմի քու ճամփէն էր պըհում։ (*Կողմ*) Պտեմ ասի, թէկուզ մի լաւ քեօթակ էլ տայ։ (*Ներսն*) Եանի, աղա՛, խի՞ ես էդ խեղճ խանըմին էդպըդա նալնըմ ու մեխըմ։

ԲԱՐՍԵՂ—Զայնդ կտրի՛, անասուն, այդ էր պակաս, որ իմ ընտանեկան գործերիս մէջ էլ խառնուես։

ՄԱԹՈՍ—Թէկուզ, աղա, վէ՛ կաց մի քանի թանթուլ էլ տուր գլխիս, հըմա ասիլ պտեմ։ Վա՛յլա՜, էն

Սբրկակօրը՝ մեր խանրմի թայը օղլուշաղ չրկայ, դու զուր ես խալխի խօսքով ընկնրմ։

ԲԱՐՍԵՂ.—Ձայնդ կտրիր, իդիօտ . . . վերկացայ ոտիս տակը կրտամ՝ չանսատակ կանեմ։ (*Կողմ*) Նշանակում է ճիշտ էր ասում Ղարագեօզեանը, թէ այս մեր տիկինը ծառային կաշառել է։ (*Նրան*) Ուրեմն այսօր խանումդ տանից դուրս չէ՞ եկել. ամեն օր կէսօրի ժամանակ տանից դուրս չէ՞ գնում և իմ գալուս միջոցները վերադառնում։

ՄԱԹՈՍ—Հըլէ դէ ես . . .

ԲԱՐՍԵՂ.—«Հըլէ»-ներդ մի կողմ թող և կանոնաւոր պատասխանիր։

ՄԱԹՈՍ—(*Անհանգիստ*) Աղա, հըլէ ես ճաքա՞յ, ախբը մի թող խօսամ է՞։

ԲԱՐՍԵՂ.—Դէ խօսիր, խօսիր, տեսնեմ դարձեալ ինչ . . .

ՄԱԹՈՍ—Աղա, դու ֆոգիս (*ցոյց տալով կոկորդը*) ըստեղս հասցրիր . . .

ԲԱՐՍԵՂ.—Ուղիղն ասիր, Մաթոս, թէ չէ, Աստած վկայ, բէվօլվէրի վեց գնտակը միանգամից կուրծքդ կըլցնեմ։

ՄԱԹՈՍ—(*Համարձակօրէն*) Դիտեմ, աղա, մենք լօռըցի ենք հա՞, ուրբոլ շատ ենք տէհել։ Բացն ասեմ՝ ոչ ըմանչեմ, մը քիչ . . .

ԲԱՐՍԵՂ.—Այս ապուշն էլ լեղու է ունեցել, համարձակութեանը նայեցէք . . .

ՄԱԹՈՍ—Աղա, հըլէ մը քիչ օրինաւոր, թահրին

խօսիր՝ ջուղաբդ տամ, թէ սուտ ասեմ՝ գլուխս կտրի։ Ես հըլէ էս տանը որ կէնում եմ՝ խանրմի խաթրու ա։

ԲԱՐՍԵՂ.—Խանումի խաթրու . . . (*զարմացած նայում է*)։

ՄԱԹՈՍ—Հըլէ հէնց հա . . . խանրմին ես հըլէ իմ մօրից ու քուրից շատ եմ ուզրմ։

ԲԱՐՍԵՂ.—(*Կողմ*) Տեսնենք ինչ է ասում այս սարից եկածը, կարծես լրջութիւն է ստանում։

ՄԱԹՈՍ—Աղա ջան, հըլէ տուր ձեռդ պաչեմ, հրմա թող լինձ մի քու ըղաքին սիրտս դըրդակե, եղնայ, թէկուզես, էլ էս քաղաքը հառամ ա կացել լինձ։

ԲԱՐՍԵՂ.—Ասիր, ես լսում եմ, ասիր տեսնենք ինչ ես ասում։ (*Կողմ*) Ինձ թւում է, թէ սա էլ խելք ու բանականութիւն է ունեցել։

ՄԱԹՈՍ—Աղա, ես իմանրմ եմ՝ էն ֆռանգի թաղին ա քու ու խանրմիս արալուղը խառնրմ իրար։

ԲԱՐՍԵՂ.—Ո՞վ . . .

ՄԱԹՈՍ—Դու ըլլես էն Սրբ Նիշանը՝ խօսք խառնիլ մի, թող խօսքս վերջացնեմ, ըլի ոչ որ խօսքիս տուտը կորցնեմ . . . Ես իմանրմ եմ, ես լաւ բրբաւուրդ եմ արել, խու հայվան չեմ. նրա տունն Աստած քանդի, ոնց որ ուզրմ ա ձեր տունը քանդել։ Աղա, քեզ դօղրուսի, էդ մարդի մլտրը չար ա, ուզրմ ա ջուրը պղտորի, որ ինքը ձուկը ֆորսայ։ Հրմա խանրմս, աղա, էն Աստծու անրմը՝

սուրբ ա, սուրբ։ Էս մէ կլոր տարի ա ըստեղ նոքար եմ, ես իմ մօրս ու քուրս վըրայ կարամ բան ասիլ, հըմա սրա վրայ՝ լիպուս կը կապվի, Զաքարի պապանձումը կառնի։ Աղա, ես ու իմ ֆոգին, ես ու իմ Աստծը, ժամ, պատարագ, օրէնք, սրբութին, ըսէնց կնիկ ըլիլ չի, լիս ա, թամամ լիս . . . ինչ որ քեզ ասըմ են՝ զուր ա, Քրիստոսի ձեռին բեռ են մեխըմ։ Մի բան էլ . . .

ԲԱՐՍԵՂ (Կողմ) Այս տղայի խօսքերից գռեհկական անմեղութիւն և անկեղծութիւն է բուրում։ (Զնոքի վերայ կոթնած լսում է)։

ՄԱԹՈՍ –Մի բան էլ ասեմ, աղա.—Էդ Գռանգի թաղին, ըսօր, մի քանի վօխտ ըղաք էկել ա մեր տուն, խանըմին ա հարցնըմ. քեզ զօղրուսի՝ շատ աջոս էկաւ, չունքի ես բըրաւուրդ եմ անըմ, որ քեզ ու խանըմիս իրար խառնողն էդ ա. համէ՝ մեղք ա իմ խանըմը, որ ըթէնց շներու հետ բէրան-բէրնի տայ՝ խօսի։ Դէ, ախըր, աղա, գուք մեղ ախմախ, էշ էք հէսաբում, հըմա մենք էլ մարդ ենք, հաց ենք ուտըմ, խոտ հօ չենք ուտըմ։ Էդ Ալաքաշը մի կանից քեզ ա գլըմ խանըմիս դէմ, մի կանից էլ ուզըմ ա՝ խանըմիս հետ գօստանայ — ըլատաս ուզըմ ա նրան էլ գլի քու դէմ . . . Հըմա, ես մեռնիմ խանըմիս գլխին, նա իր աբուռովն ու հայիովը տասն հընենց ծռտիկներու մէյմունի պէս պար կածի ու վրէներուն թրիլ չի։ Դէ, աղա ջան, ես իմն ասի, էգուց լուսաբացին ես ճամփայ եմ ընկնըմ

մեր գեղը . . . էլ հըզար թուման էլ տուղ ըլի, հառամ ա կացել ինձ էս քաղքի հացը։ (Դուրս է գնում)։

ՏԵՍԻԼ Է.

ԲԱՐՍԵՂ առանձին

ԲԱՐՍԵՂ—(Խօրը մտածմանց մէջ) Հը՜ . . . գուցէ . . . բայց . . . Մթթէ ես աւելի յիմար եմ այդ բոի գեղջուկից. մթթէ նա աւելի հեռատես է . . . մթթէ նա աւելի լաւ է կարողացել ճանաչել իմ կնոջս . . . Ո՛չ, ո՛չ, Ղարագեօղեանը չէր կարող խաբել ինձ. և ինչն էր ստիպում նրան։ Մթթէ նա կարող է այդքան բաներ իրենից հնարել։ (Խօր մտածմանց մէջ խորասուզած—լռութիւն) Այո՛, այո՛, Ղարագեօղեանը ճիշտ էր ասում,—կինս և Ամբարդանեանը ինչ-որ կապ ունին իրար հետ և ամեն օր ինձանից ծածուկ տեսակցում են. հէնց այսօր էլ իրար հետ տեսնուել են, ամեն օր են տեսնուում . . . Ես էլ այդ նկատում էի արդէն. և անցեալ օր որ մենք կառքով գնում էինք՝ ինչպէս կանգնեց գինուորի նման տրոտուարի վերայ և սրբալիր կերպով բարևեց. ես մինչև անգամ նկատեցի այն խորհրդաւոր ժպիտը, որ բարևելու ժամանակ փոխանակեց սորա հետ։—Եւ այս սարի արջը, այս գռեհիկ անասունը՝ իւր տափակ ուղեղով կամենում է անկեղծ ձևանալ ու իրը ցրել իմ կասկածներս . . . ճիշտ էր ասում Ղարագեօղեա-

ներ, ճիշտ էր ասում, որ անզգամը ծառային, այդ տարի արջին էլ է կաշառել. և ողորմելին չի հասկանում, որ դա միայն արջի ծառայութիւն կարող է մատուցանել նրան, — փոխանակ կասկածներս ցրելու՝ աւելի ևս կասկածների նորանոր ասելիներ պիտի տայ։ Ի հարկէ, ինչ էլ լինի՝ չէ՞-որ Ղարագեօղեանը չորս տարի Փարիզում հոգեբանութիւն է ուսումնասիրել. էլ ինչ հոգեբան կլինէր, եթէ չկարողանար այս լօռեցի յիմարի ներքին աշխարհը թափանցել։ (Հոլութին) Ի՞նչ պիտի լինի իմ վերջս. ես կրցնորւեմ, կըխելագարւեմ։ Անամօթնե՞ր...Եւ իրանց կեղտոտութիւնը ծածկելու համար՝ թոյլ են տալիս մի պատւական, մի աղնիւ երիտասարդի ամբաստանել, զրպարտել . . . Հէնց ապուշի ասելու ձևից էլ երեւում էր, որ սուտ է ասում. իբր թէ՝ Ղարագեօղեանը եկել է այստեղ և ուզել է ամուսնուս տեսնել։ Նա, որին ուժով եմ բերում մեր տուն, որը զզւանքով է տեսնում ամուսնուս երեսը, որը շարունակ կրկնում է. «Բարսեղ, դու չըլինէիր, եղբայրս լինէր, եթէ այդպիսի կին ունենար՝ յաւիտեան նրա շէմքից ոտք չէի ներս դնիլ», յանկարծ, իբր թէ այդ տղան եկել է այստեղ և ուզել է նրա հետ տեսակցել։ Ստո՞ր զրպարտութիւն։ (Հոլութին) Ի՞նչ անեմ . . . վերցնեմ ատրճանակս և երեք գնտակ տրա, երեքն էլ Ամբարդանեանի կրծքում դատարկեմ, թող ինձ Սիբիր տանեն, թող ինձ կախաղան բարձրացնեն, հօ կասեն մարդը նամուսով, պատւով

մարդ էր, իւր նամուսին զոհ գնաց . . . (Հոլութին) Ես արժանի եմ. կրիր, ապուշ, տար, աշխարհի մէջ խաղբուխայտառակ եղիր, թող թքեն երեսիդ, թող ամեն կողմից մատով ցոյց տան և քրքմնջան. քեզ ով էր ասում ամուսնացիր, քեզ ով էր ասում գեղեցկութիւնից աչքերդ կուրացրու և գնայ ցեխի ու անդունդի մէջ գլորւիր . . . Մի՞թէ այնպիսի դարման ենք ապրում, որ կարելի լինի մի աղջկայ, մի կնոջ հաւատալ և նրա պատիւը, նրա նամուսը մեր պատւի հետ կապել. այդ չի՞ նշանակում արդեօք՝ մի ապառաժի հետ կապւել և ծովն ընկնել։ Գամ՝ գնա, գտիր մի տգէտ, պարզ, մաքուր, աղքատի աղջիկ և նրա հետ կապւիր, կապւիր այնպէս, որ նա ամեն միջոց, ամեն հնար գործ դնի՝ այդ կապն ամուր պահելու, որ ոտքերդ փաթաթւի, ձեռքերդ լիզի, որ իրեն քաղցած փորը կշտացրիր։ Չես արել, գեղեցկութեան, գիտութեան, զարգացման ետևից ես ընկել, — դէ հիմա՝ ջանդդ դուրս գայ, տար, տանջւիր, ի հարկէ քեզ կարհամարհի, քեզանից լաւերը կորոնի . . . Անիծւէր այն օրը, որ դրան տեսայ, անիծւէր դրա ծնունդը, անիծւէի և ես, չըծնւէի և այս խայտառակութեան մէջ չընկնէի . . . (Մտածմանց մէջ խորասուզւած)։

ՏԵՍԻԼ Բ.

ԲԱՐՍԵՂ եւ ԼԻԶԱ

ԼԻԶԱ (*Մտնելով լուրջ*)—Օ՜հ, Բարսեղ, եկել ես։ Պարոն Ղարագեօղեանին չըտեսաք. նա քեզ էր որոնում։

ԲԱՐՍԵՂ—Ղարագեօղեանը։

ԼԻԶԱ—Այո, մի ժամ առաջ այստեղ էր, քեզ է հարցրել և երբ իմացել է տանը չես, ուզել է ինձ հետ տեսակցել, բայց մեր յիմար ծառան ոչ միայն ինձ լուր չի տուել, այլ՝ մի քանի յիմար-յիմար բաներ էլ է դուրս տուել։ Լսիր, Բարսեղ, տեսնելիս ներողութիւն խնդրիր այդ պարոնից, որ ծառան նրան վիրաւորել է։

ԲԱՐՍԵՂ (*Շփոթուած*)—Ո՞վ է վիրաւորել։

ԼԻԶԱ—Ծառան, Մաթոսը։ Պարոն Ղարագեօղեանն երբ իմացել է դու տանը չես, ուզել է ինձ հետ տեսակցել. ես մեր լօռբցին էլ պատասխանել է՝ «Խանումի հետ ինչ գործ ունիս»։ Յիմարը։ Հասկացրու այդ պարոնին, որ չըպիտի նեղանալ մի գռեհիկ գիւղացուց, որի մէջ հոգի ու մարմին է դարձել, թէ օտար կինը օտար տղամարդու հետ առանձնակի չի խօսակցիլ։ Եթէ ես էլ տեսնեմ այդ պարոնին՝ անձամբ ներողութիւն կըխնդրեմ։

ԲԱՐՍԵՂ—Պարոն Ղարագեօղեանը այսօր մեր տունն է եկել։

ԼԻԶԱ—Ես ասացի արդէն. մի ժամ հազիւ լինի։

ԲԱՐՍԵՂ—Դու ինքդ տեսաք նրան։

ԼԻԶԱ—Ես ներս մտայ այն բօսէին, երբ նա ոտքը նոր շէմքից դուրս էր դրել. ուզեցի պատուհանից յետ կանչել, բայց . . .

ԲԱՐՍԵՂ—Էլ ինչ բայց . . .

ԼԻԶԱ—Իսկապէս ես այդ պարոնին չեմ համակրում։ Նա խօսակցութեան ժամանակ այնպիսի յիմար ձեւեր է գործ դնում, այնպիսի դէմքի շարժումներ, որ ոչ մի պատուաւոր կին չի համակրիլ։

ԲԱՐՍԵՂ—Մի՞թէ աւելի վատ ձեւեր, քան Ամբարդանեանը։

ԼԻԶԱ—Օ՜հ, Բարսեղ, մի համեմատիր, նա շատ ազնիւ, շատ պատուական երիտասարդ է, երևի դու լաւ չես ճանաչում նրան։

ԲԱՐՍԵՂ—Երբէք էլ չէի ուզիլ ճանաչել . . .

ԼԻԶԱ—Ինչու . . .

ԲԱՐՍԵՂ—Բայց մի՞թէ դու լաւ ճանաչում ես պարոն Ղարագեօղեանին։

ԼԻԶԱ—Ասուած մի արասցէ։

ԲԱՐՍԵՂ—Ինչու։

ԼԻԶԱ—Ինձ թւում է, Բարսեղ, չընեղանաս և հայհոյանքերդ սկսես, նա մի փչացած սրիկայ է. ես այդ վաղուց նկատել եմ, բայց ինչ անեմ, որ դու իմ լեզուս և իրաւունքներս կաշկանդել ես։

ԲԱՐՍԵՂ—Թէ նրա այստեղ գալը քեզ հաճելի չէ՝ այդ էլ ես վաղուց եմ նկատել . . . Եւ ինչն է քեզ առիթ տուել նրան փչացած և սրիկայ կարծե-

լու. չէ՞որ սրիկայ անուանելով իմ ընկերիս, տիկին, մի և նոյն է թէ ինձ էլ էք սրիկայ անուանում։

ԼԻԶԱ—Լսիր, Բարսեղ, այս վեց ամսայ ընթացքում ես կարօտ եմ մնացել քեզ հետ նստելու և մի լուրջ խօսելու. մեր խօսակցութիւնը եղել է կռիւ, հայհոյանք և ուրիշ ոչինչ։ Եթէ ուզում ես լուրջ խօսել՝ ես պատրաստ եմ, իսկ եթէ դարձեալ պիտի սկսես գորգռալ, հայհոյանքներ թափել,—աւելի լաւ է լռեմ և ներքուստ այրվիմ ու տաշորվիմ, մինչև մոխիր դառնամ։ Ես դժբախտ եմ, Բարսեղ, դժբախտ . . .

ԲԱՐՍԵՂ - (Կողմ) Կարծես խանում ու ծառայ խօսք մէկ են արել այսօր լուրջ խօսելու։ (Նրան) Ես պատրաստ եմ ձեզ լսելու, տիկին։

ԼԻԶԱ (Աչքերը սրբելով) Ես քո մէջ, Բարսեղ, չէի ուզում գտնել մի ամուսին, որ թոյլ տար իրեն ինձ հետ «դուք»-ով խօսելու։ Այդ հէնց բաւական է՝ ցոյց տալու մեր ամուսնական կապի խախուտ հանգոյցը։ Ես երազում էի ընտանեկան այնպիսի մի սէր, այնպիսի մի անկեղծութիւն, այնպիսի անձնուիրութիւն, որ իրապէս երկուսիս ներկայացնէր մի սիրտ, մի հոգի։ Ես երևակայում էի՝ թէ սիրող ամուսինների սրտերի բարախումն անգամ նոյնանման կըլինի և թէ նոքա կզգան միանման, կըմբռնեն նոյնանման և այն ինչոր մէկի համար բարի է, լաւ է, ցանկալի է՝ նոյնը և միւսի համար, ընդհակառակն՝ այն ինչոր ատելի, զզուելի է մէկի համար՝ նոյնը և միւսի։ Ես այսպէս էի ըմբռնում ամուսնական կեանքը, այժմ էլ նոյնն եմ կարծում երջանիկ ամուսնութեանց վերաբերմամբ. բայց մեր ամուսնական կեանքը չըպատկեց իմ յոյսերս, իմ երազներս ու բաղձանքներս։ Մենք դըժբախտ ամուսիններ ենք, Բարսեղ, և մեր կեանքը թշուառութեան է մատնուած։

ԲԱՐՍԵՂ—Երևի այդ բանում դու կամենում ես ինձ մեղադրել։

ԼԻԶԱ—Ո՛չ, երբէք . . . Ես քեզ էլ չեմ մեղադրում, որովհետև զգում եմ, որ դու էլ նոյնքան տանջւում ես՝ որքան ես, դուցէ դու աւելի դժբախտ ես զգում քեզ։ Այստեղ, ես երկա՜ր մտածելով, եկել եմ այն եզրակացութեան, որ ոչ ես եմ մեղաւոր, ոչ էլ դու. մեղաւորը այն հասարակութիւնն ու նորա տգեղ և զզուելի բարքերն են, որի մէջ ենք և մենք։ Մեր հասարակութեան բարքերը ապականուած են և այդ ապականումը կայանում է նորանում, որ մենք թողել ենք հին-նահապետական բարքերի լաւ կողմերը և ընդունել՝ նոր-եւրոպական կեանքի տգեղ կողմերը. այդպիսով երկու կեանքի տգեղութեանց մէջն ենք խարխափում մենք։ Կորցնելով նահապետական սուրբ և միամիտ բարքերը՝ մենք նորանց տեղ դրել ենք եւրոպականի արտաքին և ձևական մասը միայն. այդպիսով յօրինել ենք նոր կեանք, նոր բարքեր, որոնք երբէք չեն կարող ընտանեկան երջանկութիւն յառաջացնել։

ԲԱՐՍԵՂ—Խնդրում եմ մի քիչ պարզ խօսիր։

ԼԻԶԱ—Ասածներս կարծում եմ բաւականին պարզ են։ Եւրոպացիք ընտանեկան ազատութիւն են վայելում, որովհետև՝ օրիորդ և երիտասարդ միմեանց շատ լաւ ճանաչելուց յետոյ միայն կապւում են ամուսնական կապով և այնուհետև կեանքը ազատ լինելով՝ իւրաքանչիւրն ամուսիններից վստահ միւսի վերայ՝ թողնում է նրան կեանքի մէջ. ոչ մի միջադէպ չի պղտորում ամուսիններից մէկի միտքը՝ դէպի միւսը. ճանաչում են միմեանց, վստահ են իրարու։—Բայց մենք՝ կեանքի ազատութեան արտաքինը ձեռք ենք բերել, միջոց ունինք օտարների հետ ասելու, խօսալու, ծիծաղելու, բայց բարոյականը չենք ձեռք բերել,—ամուսնացողները միմեանց հետ ծանօթանալու, միմեանց՝ բնաւորութիւն, վարք ու բարք ուսումնասիրելու մասին չեն էլ մտածում. և այդ է պատճառը, որ ամուսնութեան երկրորդ-երրորդ օրն իսկ՝ կասկածը մտնում է նորակազմ ընտանիքի մէջ և ահա հազարաւորների վերայ մի զոյգ դժբախտներ էլ աւելացան . . .

ԲԱՐՍԵՂ—(Կողմ) Ա՜խ, եթէ սորա հոգին համապատասխան լինէր ասածներին . . . Շարունակիր, ես լսում եմ . . .

ԼԻԶԱ—Այդպէս էլ մենք, Բարսեղ. դու ճանաչում էիր արդեօք ինձ, ծանօթ էիր իմ բնաւորութեան, իմ վարք ու բարքի, իմ հայեացքների հետ. կարծում եմ, որ ինքդ էլ կըխոստովանուես, որ «ոչ». . .

ԲԱՐՍԵՂ—Լա՜ւ, ես երիտասարդ էի, շլացած արտաքինով միայն՝ չըմտածեցի ներքինի—բարոյականի մասին ես հետաքրքրուել, բայց դու, տիկին, դու որ այդ բոլորը այդպէս վարպետութեամբ ճառում ես, դու ինչու չըմտածեցիր այդ բանը։

ԼԻԶԱ—Դու երիտասարդ էիր, իսկ ես ծեր էի. ես էլ նոյն կերպ՝ բաւականացայ արտաքինով միայն։ Բայց ինչու, մեր մէջ մի սովորութիւն էլ կայ,—ծնողները հետաքրքրւում են սրան-նրան հարցնելով . . . Այդ էլ մեր ծնողների կողմից մի կեղծ պատրուակ, մի միջոց է՝ ապագայում պատասխանատուութիւնից ազատուելու, իրենց արդարացնելու համար։

ԲԱՐՍԵՂ—Ներողութիւն, տիկին, անցեալում նոյնքան աւելի անհետաքրքիր էին. անցեալում շատ անգամ ամուսիններ իրար երես պսակից յետոյ էին միայն տեսնում, բայց և այնպէս՝ նրանց մէջ չէին կրկնւում այն տգեղ երևոյթները, որ այսօր մեղանում կան։ Նրանք միամիտ, սրբութեամբ մօտենում էին իրար և սրբութեամբ էլ կապւում։

ԼԻԶԱ—Ճիշտ է, Բարսեղ, ես արդէն այդ ասացի։ Հէնց այսօր էլ դիւղերում այդ նահապետական սուրբը կեանքն է տիրում. բայց 'ի նկատի ունեցիր, որ այնտեղ կինը միջոց չունի օտարների հետ տեսնուելու, ասելու, խօսալու, ծիծաղելու, ապուրեմն և կասկածներ յարուցանելու։ Իսկ մեղանում՝ աւելիներն անպակաս են . . .

(Մանում է Մաթոսը)

ՏԵՍԻԼ Թ.

Նրանք եւ ՄԱԹՈՍ

ՄԱԹՈՍ—*(Մի կտոր թուղթ ձեռքին, կողմ)* Ստուած չար աչքից հեռու պահի։ *(Նրանց)* Հլէ էկել եմ հէսաբս վերջացնիլ պտեմ։

ԲԱՐՍԵՂ—Ի՞նչ հէսաբ, ա՛յ տղայ։

ՄԱԹՈՍ—Խանըմ ջան, ըսօր մի մանէթ ես տուել,—չորս գրանքայ միս—40 կապեկ, էրկու գրանքայ մրկարօն—20 կապեկ, 8 հատ ձու . . .

ԲԱՐՍԵՂ—Ի՞նչ անժամանակ աքաղաղի նման մուլթը չընկած կուկլուկու ես կանչում, տո՛, դուրս գնա՛, լաւ, տեսնում ես խօսում ենք։

ՄԱԹՈՍ—*(Կողմ)* Ստուած համէշա ըլթէնց սիրով պահի։ *(Նրան)* Հէ՛, աղա, վալլա, ես պտեմ էթայ, հլէ կարալ չեմ կէնամ։

ԲԱՐՍԵՂ—Ջհանդամը գնաս, դէ լաւ, գնա՛։

ՄԱԹՈՍ—*(Կողմ)* Նալլաթը չար սրտանի՞ն. . .

ԼԻԶԱ—Հ՞ը, ի՞նչ խարար է, Մաթոս, ո՞ւր ես գնում։

ՄԱԹՈՍ—Մեր գեղը, խանըմ ջան, էլ ուզում չեմ նօքարութին անեմ։

ԼԻԶԱ—Հ՞ը, ի՞նչ է պատահել այդպէս յանկարծակի։

ՄԱԹՈՍ—Հլէ մի քիչ ըզաք ես աղին ասել եմ։

ԼԻԶԱ—*(Բարսեղին)* Երևի էլի բարկացել ես

վերան, Բարսեղ, չէ՞, լաւ տղայ է մեր Մաթոսը։

ԲԱՐՍԵՂ—Լաւ, Մաթոս, գնա՛, էգուց կըխօսենք։

ՄԱԹՈՍ—*(Կողմ)* Չար աչքից հեռու՝ կակղել ա։

ԼԻԶԱ—Հէ՛, Մաթոս, ո՞ւր պիտի երթաս, դու մեր տան տղէն ես. գնա բանիդ կաց, վաղը ադայիդ հետ կը խօսես, եթէ ուզում ես՝ ռօճիկդ էլ կաւելացնի։

ՄԱԹՈՍ—Հէ՛, խանըմ ջան, հլէ ձեր սայից, փառք Աստծու, ես ռոճկի խօսք չունեմ։

ԲԱՐՍԵՂ—Լաւ, լաւ, էգուց կը խօսենք, այժմ աղատ թող մեզ։

ՄԱԹՈՍ—*(Կողմ)* Ջան խանըմ . . . ոնց ա խամ գոմշի նման ըկանջիցը բռնել, խեղճացրել, հլէ լուծը չընքին դրել։ Թէ մի հո՞ւ անեմ, ոնց ա խըրտնըմ, սամիքը կոտրատըմ, լուծն էլ ջարդ ու փշուր անըմ, սէլն էլ սարէսար գձում, քարավներիցը թող անըմ։ *(Խէթ-խէթ նայելով Նրանց, դուրս է գնում)*։

ՏԵՍԻԼ Ժ.

ԲԱՐՍԵՂ եւ ԼԻԶԱ

ԲԱՐՍԵՂ—Հա՛, շարունակիր, տիկին, տեսնեմ ո՞ւր ես հասցնում։

ԼԻԶԱ—Որպէս «տիկին», այսինքն՝ այն պաշտօ-

նական ձևով, որ դու վարում ես ինձ հետ, ես սրանից աւելի առաջ երթալու իրաւունք էլ չունիմ. կարծում եմ այսքանս էլ բաւական էր յառաջ գնալու մի «տիկնոջ» մի «պարոնի» հետ։ Լսիր, Բարսեղ, եթէ դու պիտի շարունակես ինձ հետ «տիկին»-ներ գործածել, պարզն ասիր, որ ես էլ քեզ հետ խօսելիս «պարոն» բառը գործածեմ . . . Եւ այն ժամանակ, կարծում եմ, թէ անմտութիւն և թէ միանգամայն անտեղի կըլինի մեզ ամուսիններ համարել։

ԲԱՐՍԵՂ—Ես խնդրում եմ, Լիզա, զանազան բառախաղութիւններ մի անիր. խօսում էինք լուրջ, շարունակիր ասելիքներդ, տեսնում ես, որ ես լսում եմ քեզ։

ԼԻԶԱ—Այդպէս, դու ինձ անունով կոչեցիր, ուրեմն ես էլ ասելիքներս պիտի շարունակեմ։ Լսիր, Բարսեղ, ուրեմն ամիս է՞ինչ ամուսնացել ենք, և ուրեմն ամուսնական ընթացքում դու միայն սկզբի երկու ամիսներումն էիր ինձ հետ վարում որպէս սիրող ամուսին. էլ ինչ պատահեց՝ չգիտեմ . . . միայն դու փոխեցիր քո վերաբերմունքդ դէպի ինձ, փոխեցիր քո բնաւորութիւնը, մեռաւ քո մէջ դէպ՝ ինձ տածած սէրդ և այնուհետև դու ներկայացար բոլորովին մի այլ մարդ . . . Թողիր ընտանիքդ, քեզ տուիր թղթախաղի, արբեցողութեան, այնուհետև՝ ամուսնական սիրալիր զուրգուրանքների, քաղցր քըրքիջների փոխարէն՝ մեր տանը լսւում էր հայհոյանք-

ներ, յիշոցներ և փողոցային լուտանքներ։ Մեր ընտանեկան սուրբ յարկը, որ մի փոքրիկ դրախտ տեսնելու բաղձանքներով ներս մտայ՝ երկու ամսից յետոյ ներկայացաւ ինձ դժոխք, զանազան սրիկաների, արբեցողների ժողովատեղի, մի կատարեալ պիվնս... Ցաւդ ես այդ բոլորը կարողացայ տանել, դիմացայ, տոկացի . . . և դիմանալու ոյժ ու կարողութիւն ներշնչում էր ինձ, Բարսեղ, դէպ՝քեզ տածած անհուն սէրս միայն . . .

ԲԱՐՍԵՂ—Անհուն սէ՞ր . . .

ԼԻԶԱ—Այո, անհուն սէր . . . բայց այժմ՝ այլևս չեմ կարող տանել, Բարսեղ. մի բան կայ այստեղ, որը ես քեզանից էլ, ամբողջ աշխարհից էլ բարձր եմ դասում և միշտ պատրաստ եմ՝ քեզ էլ, ամեն ինչ էլ զոհել նրան (*Բարսեղը զարմացած աչքերը շռում է*),—դա իմ պատիւն է։ Ես տեսնում եմ, Բարսեղ, որ այս յարկի տակ մեռնում է իմ արժանապատուութիւնը, ես տեսնում եմ՝ վտանգի մէջ է իմ պատիւը, փրկիր ինձ, Բարսեղ, 'ի սէր այն բոլորի, որ քեզ համար սրբութիւն է, խղճա ինձ, ազատիր ինձ այս գերութիւնից, որ աւելի սոսկալի է՝ քան միջնադարեան ստրկութիւնը. կամ սպանիր ինձ, Բարսեղ, թող պատուով աչքերս փակեմ, կամ ազատիր ինձ այս տան ապականած մթնոլորդից, ազատիր այս սրիկաների որջից, ուր կամենում են պատիւս արատաւորել . . . (*Լաց է լինում*)։

ԲԱՐՍԵՂ—Հանգիստ, Լիզա, հանգիստ, ինչու՞ ես լաց լինում. մենք լրջօրէն խօսում ենք, ինչ կարիք կայ վրդովուելու։

ԼԻԶԱ—Դու ինձ ցեխն ես կոխել, Բարսեղ, և թոյլ ես տուել ամեն մի սրիկայի ինձ կոխ տալու. դու ես մեղաւոր, Բարսեղ, բայց ընդունիր թէ ես եմ մեղաւոր, ինչ ուզում ես՝ համարիր, միայն թէ՝ փրկիր ինձ անուանարկութիւնից, փրկիր ինձ կորստից։ Ընդունիր թէ՝ մի տաճկական հարեմում ընկածփակուած հայուհի եմ, աղաչում, պաղատում, թախանձում եմ քեզ, փրկիր ինձ, 'ի սէր քո բոլոր սրբութիւնների (*լաց է լինում*)։

ԲԱՐՍԵՂ—Խնդրում եմ, Լիզա, խօսիր լրջօրէն, ինչու՞ համար ես 'ի զուր լաց լինում։ Դու լաւ գիտես, որ ես շատ էլ համակիր չեմ լացին. լացով ոչինչ չի կարելի ապացուցանել, վերջացրու խօսքդ, որ ես էլ ասելիքներ ունիմ . . . Ասա՛ խնդրեմ՝ ո՞վ է կամենում պատիւդ արատաւորել։

ԼԻԶԱ—(*Աչքերը սրբելով եւ լրջօրէն*) Առաջինը դու, Բարսեղ, որ քեզ տուել ես թղթախաղի և արբեցողութեան, երկրորդը՝ դու, որ զանազան սրիկաների հետ ընկերացել ես և երրորդը դու, որ Ղարագեօղեանի պէս լրբերին թոյլ ես տալիս ոտք ներս դնել իմ տան շէմքից . . .

ԲԱՐՍԵՂ - Վա՜հ . . .

ԼԻԶԱ—Զարմանում ես . . . զարմացիր։

ԲԱՐՍԵՂ—Ղարագեօղեանը։

ԼԻԶԱ - Այո՛, Ղարագեօղեանը, քո մտերիմ և սիրելի ընկերը, այդ Եւրոպայի փողոցները թափառող և լրբութիւնների «հոգեբանական» դիպլոմով վերադարձող Ցուդան, քեզ դէպի արբեցողութիւնն ու թղթախաղը մղողը, քո առաջ իմ վարկը վայր ձգողը, քեզ իմ դէմ լարողը, իմ անունս մի ազնիւ պարոնի՝ Ամբարդանեանի հետ շարամտօրէն կապողը, որ ամեն հնար գործ էր դնում՝ ինձ էլ քո դէմ զինելու, վերջապէս որ յանդգնում էր իմ պատիւս էլ արատաւորել, այն՝ քեզ հրեշտականման ներկայացող դևը, հրէշը . . .

ԲԱՐՍԵՂ (*Կասկածանքով*) Բայց . . . դու ինչ գիտես այդ բաները, քեզ ո՞վ ասաց թէ նա Ամբարդանեանի մասին խօսել է ինձ հետ . . .

ԼԻԶԱ—Արդարութիւնը և ճշմարտութիւնն ասացին ինձ այդ բոլորը՝ քո բերանով . . . Ես լսում էի, թէ ինչպէս դու ամեն օր երաղի մէջ խօսում էիր այդ բոլորը, ես լսում էի ամեն ինչ ուշադրութեամբ . . .

ԲԱՐՍԵՂ—Ուրեմն դու Ամբարդանեանի հետ ոչ մի ծածուկ տեսակցութիւն չես ունեցել . . . Ասիր, 'ի սէր Աստուծոյ, Լիզա, քիչ է մնում ես խելագարւեմ. այսօր դու նրա հետ կառքով շրջելիս չես եղել։

ԼԻԶԱ—Այսօ՞ր . . . կառքով շրջելիս . . . խե՜ղճ իմ Բարսեղ . . . ինչպէս մոլորեցրել են քեզ։ Ես, պատահել է, որ տեսել եմ Ամբարդանեանին,

խօսել եմ նրա հետ, բայց նախ՝ քեզ հետ միասին, երկրորդ՝ վերաբերուել եմ նրան որպէս իմ եղբօրս —Կարապետին։ Օ՜հ, հրէշներ, հրէշներ . . .

ԲԱՐՍԵՂ—Իսկ ինչով է վիրաւորել քեզ Ղարագեօղեանը . . .

ԼԻԶԱ—Երէկ գիշեր, քո մօտից դուրս գալիս, նա տեսաւ ինձ նախասենեակում և . . . և . . . «Ո՛րքան գեղեցիկ էք, տիկին», ասաց։

ԲԱՐՍԵՂ – Իսկ դու . . .

ԼԻԶԱ—Ես լռեցի և ամբողջ գիշերը ողբում էի, այն միջոցին, երբ դու հարիւրներ տարած, հարբած խռմփում էիր և երազումդ սպառնում ինձ կտոր-կտոր անելու, արիւնս խմելու։

ԲԱՐՍԵՂ—(Մի փոքր լռութիւն) Ղարագեօղեանը այդպէս . . .

ԼԻԶԱ – Այո, այդպէս . . . բայց դու, Բարսեղ, դու ես բոլորի պատճառը. քեզպէսների միամտութիւնից է, որ օգտւում են գանգան Ղարագեօղեաններ և շարունակում իրենց զոյութիւնն ու շահատակութիւնները . . . Ես թշւառ եմ, Բարսեղ, խղճա՛ ինձ, վերադարձրու իմ այնքան շուտ կորցրած երջանկութիւնս . . . (Թախանձագին) չէ՞ որ ես անմեղ եմ, տուր ինձ իմ ընտանեկան քաղցը կեանքս։ (Արտասւում է)։

ԲԱՐՍԵՂ – Նու, բաւական է, Լիզա, լուրջ խօսակցում ենք, մի կողմ թող կանացի անտեղի արտասուքներդ։

ԼԻԶԱ (Հեկեկալով)—Անտեղի՞ . . . Ուրիշ ինչ զէնք ունինք մենք, բացի արտասուքը . . . Դուք, տղամարդիքդ անիրաւաբար կողոպտել էք մեր ինքնապաշտպանութեան բոլոր զէնքերը և թողել միայն արտասուքը, այն էլ, եթէ հնարաւոր լինի, կը խլէք, որովհետև ձեզ տհաճութիւն է պատճառում։

ԲԱՐՍԵՂ—Հարցից մի՛ շեղւիր, Լիզա, շարունակիր։

ԼԻԶԱ – (Հեկեկալով) Այլևս ոչինչ չունիմ ասելու, ես ամեն ինչ ասացի։

ԲԱՐՍԵՂ—Վերջապէս, Լիզա, վերջ տուր լացիդ, աչքերդ կուրացան։

ԼԻԶԱ – Ի՞նչ անեմ, Բարսեղ, ես անզօր եմ բնութեան դէմ մաքառելու (Որոնում է թաշկինակը եւ չըգտնելով՝ դիմում մեկ սենեակը)։ Օ՜հ, անիրաւ ճակատագիր։

ՏԵՍԻԼ ԺԴ.

ԲԱՐՍԵՂ առանձին

ԲԱՐՍԵՂ – (Մտախոհ) Օ՜հ . . . եթէ ճիշտ լինի . . . Ո՛չ, ո՛չ, ո՛չ, անկարելի է . . . (Լռութիւն) Նու, ինչ էլ լինի՝ պէտք է մի դրական ելք գտնել, այսպիսի երերուն կեանքն էլ մի կեանք չի։ Պէտք է վերջ տալ այս բոլորին, պէտք է լուսաբանել ճըշմարտութիւնը, պէտք է մի լուրջ եզրակացութեան

գալ։ Օրերն իրար ետևից անցնում են՝ և նոյն անորոշ դրութիւնը, նոյն ողորմելի կացութիւնը։ (Հոութիւն)։ Անձնատուր լինել նորանոր մոլութեանց—արբեցողութեան, խաղամոլութեան, ցոփ կեանքի, դրանցով հոգեկան յուզումներն ու վիշտը ծածկելը, մոռացութեան տալը՝ ինքնախաբէութիւն է։ Պէտք է ազատուել այս դրութիւնից, սա կեանք չէ։ Ի՞նչ էլ ուզում է լինի՝ իմ գործս լինելու է ապականութեան և տղմի մէջ թաղված հրէշների հետ . . . Օ՜հ, հրէշնե՜ր, հրէշնե՜ր, դուք իմ ամբողջ կեանքս խորտակեցիք . . . Ո՜րպիսի քաղցրութեամբ, ո՜ր-պիսի յոյսերով մօտեցայ ամուսնական կեանքին, ի՜նչ երջանկութիւններ էի ակնկալում նրանից,—կին, տուն, տեղ, սիրասուն զաւակներ . . . կորա՜ն, կորա՜ն բոլոր երազներս։ (Հոութիւն)։ Մտածել այդ բոլորի մասին՝ այլ ևս աւելորդ է։ Իմ դերս որոշված է,—կամ նա, կամ այս երկուսը . . . (Գրասեղանից հանելով ատրճանակը եւ փամփուշտները նորից տեղաւորելով նրա մէջ)։ Պէտք է ստուգել, որքան կարելի է լուրջ կերպով ստուգել, թէ՝ ո՞րն է մեղաւոր և ո՞րն անմեղ։ Եթէ Ղարագեօզեանը,—ապա վեց գնտակն էլ նրա կրծքում, իսկ եթէ կինս և Ամբարդանեանը—երեքը մէկին, երեքն էլ միւսին . . . Է՜հ, Բարսեղ, դէպի գործ . . . որն էլ լինի՝ քեզ համար կեանքը մեռած է արդէն . . . փակիր այս տեղ աչքերդ և բաց արա Սիբիրի սառնամանիքներում կամ հանքահորերի մթին ներքնաշխարհում։ Է՜հ, ինչ էլ լինի՝ այսուհետև ինձ համար կեանքը մեռած է, յամենայն դէպս՝ ես կոչված եմ ոճրագործութեան . . . Էլ մնաս բարով կեանք և անդառնալի երջանկութիւն։ (Դնում է ատրճանակը գրպանը եւ շտապով դուրս գնում)։

Վ Ա Ր Ա Գ Ո Ց Ր.

ՊԱՏԿԵՐ Բ.

Բեմը ներկայացնում է Բարսեղ Ս.հարոնեանի Ս. պատկերի սենեակը, իսկ եթէ հնարաւորութիւն կայ փոխելու՝ սեղանատունը. այս դէպքում Ս. պատկերի մեծ պահարանը պէտք է տեղատրել նոյն կարգով այստեղ։ Մաթոսը կարգի է բերում սենեակը, որրիչով մաքրում աթոռների թոզը եւ քթի մէջ եղանակում։

ՏԵՍԻԼ Ա.

ՄԱԹՈՍ առանձին

ՄԱԹՈՍ—(*Աթոռների թոզը սրբելով*) Տօ, ըղորթ որ որդի կռիւ, ղլմաղալ, անսէրութին, ընդիան հլէ Աստած էլա փախչում, Քրիստոսն էլ, ըւատաս սրբ հրեշտակնին էլ, ուր մնաց խեղճ նօքարնին, որ՝ հլէ աղէն ա խանըմի հետ կռիւսը տալի՝ խանըմն ա նօքարի գլխին բամփաչում, խանըմն ա կռիւսը տալի՝ աղէն ա հերսը նօքարի գլխին թափում։ Է՛հ, նօքարութէնի փիրն անրծի. եարաբ Աստծու խելքին, մեղայ Աստծու, ինչը փըշեց հլէ նօքար ու աղա ստեղծիլ. ադա, եա չիմնուն էլ նօքար ստեղծի, որ իրար ղադր իմանան, եա բիրադնուն էլ աղա ստեղծի, որ մինը մէկսէլի գըլխին բամփի ուչ։ Ա՛յ քու եարաղանիդ մեռնիմ Աստած, հլէ թէ մէ ինձ էլ աղա կըդարձնե՞ս՝ ես եմ իմանում թէ . . . մեղայ Աստծու, Մեղայ Աստծու, Աստած ջան, ղալաթ արի, ինց որ հլէ ինձ ըստեղծել ես՝ ընհենց էլ թող մնամ, ես իմանում եմ, որ Դու ջուխտ ձեռով մարդու տալ չես, թէ փոքն ես տալի՝ հլէ գլխին էլ մի լաւ բամփում ես,—եա տընից, եա օղլուշաղից, եա որդուց՝ ընհենց մի ցաւի մէջ ես գձում, որ հլէ խեղճը ինքն էլ ա մտորում, օրը տասը նհետ իր ծնունդն անիծում։ Է՛հ, մեռնիմ իմ փայ Աստծուն, ինչս ա պակաս, չէէլ հրմի, ասենք՝ ադիս գլխին էր Աստած բամփաչում, նա էլ իմ գլխին, հրմի, հլէ չար աչքից հեռու՝ էս էրկու շաբաթ ա կապով ընկած ֆորդ ա դառել, խանըմիս նհետ մեղրով մաստակ են էլել . . . Ես իմ Աստծը՝ զօռբա կնիկ ա, էվալլա՛ . . . էլ ինչ ուշունցնի, ինչ ղըլմաղալ, ինչ էն թուլունդէքոնց նհետ ընկնիլ . . . թամամ աղէս մարդ ա դառել . . . Ջհանդամը, հլէ էն խեղճ կնիկը պրծա՞ւ . . . Տօ, կասես աղէս հմի խանըմիցս էլ լաւն ա դառել, հետս ջանով ա խօսում։ Մէկ ասում եմ՝ գնամ, մէկ էլ ադիս խաթրիցը անց չեմ կէնում։ Օխտ-ուրթն ամիս ա տանից դուս եմ էկել, էլ ջրատար Թէլլուիս հալը գիդում չեմ թէ ինցա. ա՛յ կտրւի հլէ մեր ադաթը, ասում են՝ օղլուշաղը իրան մարդին գիր չի գրիլ, հլէ ամօթ ա, մեղք ա . . . ա՛յ ես հլէ դրա մգոնոցի . . . Հմի նաչար Թէլլուիս աչքը ջուրը կտրեց։ Հլէ թէ մէկ ասում եմ աղուրթինը լաւ բան չի՞, մըն էլ՝ որ ջէրս լինքն

ըլլէր՝ բա խի իմ Թէլլուխս թողնըմ աչքը ճանպին . . .
Ըւատաս հմի գըշեր ցերէկ աչքը ըրտասունք իմ
ճանպէն ա պահըմ, ով ա իմանըմ հըմի ինչ դարդ,
ինչ ցաւ ունի, ուզըմ ա հլէ մի ծիտ դառնայ,
թռնի դայ կշըտիս, մի իր սիրտը դըտարկի . . .
Է՜յ-հէյ, անտէր մնաս դարիբութին։ Տօ, էս էլ հլէ
մի կեանք չի՜։ (*Աթոռները սրբելով մեղմ ձայնով երգում է*)—

Գուռնամ գիդէրսան Ադպաշա,
Համ զօլումա, համ դարդաշա,
Գուռնամ եարա սալամ էյլա.

Ուչ Թէլլի, դօռթ Թէլլի, բէշ Թէլլի գուռնամ,
Հարալի գուռնամ, եարալի գուռնամ,
Մանի կոյուփսան վէրանա գուռնամ։

Ճանապարհս ընկաւ Թիֆլիզ,
Կրակ ընկաւ մէջ իմ սրտիս,
Խաբար տարէք անուշ եարիս.

Երկրորդ խումբ, երրորդ խումբ, չորրորդ խ. կռունկ,
Որտղան ես գալիս վերաւոր կռունկ,
Փորսկանի ձեռից դու փախած կռունկ։

Լալով գնում եմ ճանապարհ,
Նա իր տանն է, ես եմ օտար,
Կարօտ սրտիս բարևը տար.
Երկրորդ խումբ, երրորդ խումբ և այլ . . .

ՏԵՍԻԼ Բ.

ՄԱԹՈՍ ԲԱՐՍԵՂ եւ ԼԻԶԱ

ԲԱՐՍԵՂ—(*Լիզայի հետ երեւալով դրան մէջ, մի փոքր լսելուց յետոյ, ուրախ ուրախ ներս մտնելով*) Բաւո, Մաթոս, լա՜ւ երգել ես իմացել։ Տեսնում ես, Լիզա, ինչ լաւ, շնորքով տղայ է մեր Մաթոսը։ (*Մաթոսը ամօթխածութեամբ քաշւում է մի կողմ, երբեմն ժպտուն հայեացք ձգելով նրանց վերայ*)։

ԼԻԶԱ—Ի հարկէ լաւ տղայ է մեր Մաթոսը, ապա դու նոր ես ճանաչում։

ԲԱՐՍԵՂ—Ես գիտէի, որ լաւ տղայ է, բայց չըգիտէի թէ՝ երգել էլ գիտէ. որտեղ ես սովորել, Մաթոս։

ՄԱԹՈՍ—Դէ ախար ես էլ հլէ վարժատուն եմ գնացել, ապա ջան, բա հօ . . .

ԼԻԶԱ—Մաթոս, եկ ուղիղն ասիր, հիմա էլ հօ միտք չունիս գիւղը գնալու։

ՄԱԹՈՍ—Թէ որ աղէն հլէ իրաւունք տայ՝ բա խի չեմ գնալ։

ԲԱՐՍԵՂ—Տօ, մինչև հիմա խանումի խաթրու էիր այստեղ կենում, հիմա իմ իրաւունքն ես պահանջում։

ԼԻԶԱ—Լաւ, լաւ, Մաթոս, հիմա էլ դու ինձ նշանակութիւն չես տալիս, հա, լաւ . . .

ՄԱԹՈՍ—Դէ, խանդամ ջան, չէէլ հրմի ուրիշ . . . հլէ հրմի ուրիշ . . . ադէն իր տեղն ունի, խանդամը՝ իր տեղը։

ԲԱՐՍԵՂ.—Ա՜յ մեռած, էլ նաղ մի անիլ, խոսելուդ երևում է՝ նշանածիդ կարոտել ես, հ՞ը, դէ արի ուղիղն ասիր։

ՄԱԹՈՍ—Չէ, հը՞, եանի խի՞ ես հլէ ձեռք առնում, ադա։

ԼԻԶԱ—Հաւատացիր, Մաթոս, մենք որոշել ենք՝ այս տօներին մի ամսով քեզ իրաւունք տալ տուն գնալու։

ԲԱՐՍԵՂ.—Տես, Մաթոս, թէ ուղիղը խոստովանուես՝ որոշել ենք քեզ համար մի ձեռք լաւ հագուստ առնել, լաւ զուգել-զարդարել, ճանապարհածախքդ էլ տալ և մի ամսայ արձակուրդով ուղարկել Թէլուիդ մօտ. հէնց այդ արձակուրդիդ ամսականն էլ առաջուց կստանաս։

ՄԱԹՈՍ—Դէ, ադա, հը՞, հը, հը . . . (*ծիծաղելով գլուխը թափ է տալիս*)։

ԲԱՐՍԵՂ. (*Նոյնպէս ծիծաղելով*) Դէ, մեռած, էլ շատ մի քաշմշի, երևում է . . .

ՄԱԹՈՍ—Դէ, ադա չիմս էլ հլէ ադամորդի ենք։ (*Ամաչելով երեսը շուռ է տալիս*)։

ԲԱՐՍԵՂ. Դէ լաւ, վաղը միասին կըգնանք բազար, քեզ համար մի լաւ շուխա, մի արխալուղ, փօշիկ և ուրիշ ինչ որ պէտք է կառնեմ, խանումդ էլ նշանածիդ համար շորեր կըտայ և միւս օրը կը

ճանապարհուես գիւղ՝ Թէլլուիդ տեսութեան։

ՄԱԹՈՍ—Աստած, հլէ, ադա ջան, ձեզ միշտ յաջող պահի, մենք էլ ձեր սայիցը ապրիլ պտենք։ Աստած էս օջաղը՝ վառ պահի, ձեզ էլ հլէ համէշա ըմէնց սիրով։ (*Դուրս է գնում*)։

ԲԱՐՍԵՂ. Իսկապէս, Լիզա, ես չէի կարող երևակայել, թէ սա այդքան պատուական տղայ կարող է լինել։ (*Մտնում է կրկին Մաթոսը*)։

ՄԱԹՈՍ—Ադա ջան, հլէ պտի բախշես, մտիցս ընկաւ, հլամ կարալ չեմ գեղը գնամ։

ԲԱՐՍԵՂ. (*Զարմացած*) Ինչու։

ՄԱԹՈՍ—Հլէ մի պուճուր բան ունիմ ըստեղ։

ԼԻԶԱ—Ի՞նչ բան։

ՄԱԹՈՍ—Հլէ դու ըլլես էն Աստածը՝ հարցնիլ մի, խանդամ ջան, հլէ կարալ չեմ ասեմ։

ԲԱՐՍԵՂ—Այդ ի՞նչ բան է, Մաթոս, որ մեզանից ծածկում ես։

ՄԱԹՈՍ—Հլէ օրթում եմ կէրել, ադա ջան, չէէլ էդ բանը կըտարուի ա՞չ՝ կարալ չեմ էս քաղքից ոտս դուս դնեմ։

ԼԻԶԱ Ուրեմն ե՞րբ ես մտադիր գնալու։

ՄԱԹՈՍ—Հլէ գիդեմ ա՞չ, եբ որ օրթումս կըկըտարուի՝ ես ձեզ կասեմ։

ԲԱՐՍԵՂ—Այդ ի՞նչ երդում է, հ՞ը, էլի մի բան կունենաս, Մաթոս։

ՄԱԹՈՍ—Էն Աստածը՝ կարալ չեմ օրթումս կոտրիլ, զօռիլ մէք։ (*Կողմ*) Չէէլ Քռանդի թաղուն

մի արջապար ածեմ ոչ՝ հլէ ուր պտեմ էթայ, հայ—հո՜. . . (դուրս է գնում)։

ՏԵՍԻԼ Գ.

ԲԱՐՍԵՂ եւ ԼԻԶԱ

ԲԱՐՍԵՂ—Գիտես, Լիզա, հիմա ես այդ տղային ո՞րչափ եմ սիրում. . . Ես մինչև այժմ բոլորովին այլ կարծիք ունէի մեր գեղեցիկ գիւղացիների վերաբերմամբ. ես կարծում էի, թէ տնտեսական ծանր պայմանները, զանազան օրինաւոր և ապօրինի հարստահարութիւնները՝ դրանց այլասեռած կըլինեն, բայց սա իւր վարմունքով ապացուցեց, որ այդ կարծիքս սխալ է։

ԼԻԶԱ—Ճիշտ է, Բարսեղ, տնտեսականը մի որոշ չափով կարողանում է իւր աւերիչ ազդեցութիւնը գործել բարոյականի և բարքերի վերայ, բայց այս էլ 'ի նկատի պէտք է ունենալ, որ այդ ազդեցութիւնն աւելի աչքի է ընկնում քաղաքացիների վերաբերմամբ։

ԲԱՐՍԵՂ—Բայց չէ՞ որ գիւղացիք աւելի հարստահարւած են։

ԼԻԶԱ—Մի մոռանալ, որ գիւղացիք որքան էլ հրստահարւեն, այնու ամենայնիւ նոքա բարոյական մեծ ոյժ ունին տոկալու։

ԲԱՐՍԵՂ—Ո՞րն է նրանց բարոյական ոյժը,

(հեգնօրէն) երևի տգիտութիւնը։

ԼԻԶԱ—Ո՛չ, տգիտութիւնը բացասական ոյժ կարող է լինել, այլ՝ անկեղծութիւնը, պարզութիւնը, բարոյական մաքուր վարք ու բարքը։ Մի փոքրիկ օրինակ—գիւղացիք աւելի նիւթական կարիքներ ունին, ինչու ապա փողով հաւատ որսող բողոքականներն ու կաթոլիկները չեն կարողանում նրանց որսալ և գիւղերում նոյն յաջողութիւններն ունենալ՝ ինչ որ քաղաքներում։

ԲԱՐՍԵՂ—Հա՛, գիտես, Լիզա, այսօր այդ մասին «Փարոս»-ում մի ընդարձակ յօդուած կար, պահեցի, որ տամ կարդաս։ Բաւականին լաւ յօդուած է։ (Հանում է ծոցից մի թերթ եւ ցոյց տալով յօդուածը, առաջարկում նրան։) Այս է, տես։

ԼԻԶԱ—Մի՞տս։ (Երկուսն էլ ծիծաղում են)։

ԲԱՐՍԵՂ—Օ՜հ, ի՞նչ խորամանկն ես։

ԼԻԶԱ—Ե՞ս թէ դու. . . խօսքով խաբեցիր, որ խաբես, ձեռքս տաս «եաղ'աստ» ասես։

ԲԱՐՍԵՂ—Է՛, կածում ես առանց քո տանելու էլ խոստումս չեմ կատարիլ. դու դեռ կասկածում ես, թէ՝ ես պիտի շարունակեմ իմ նախկին զզուելի ընթացքը։

ԼԻԶԱ—Չէ, Բարսեղ, կըշարունակես թէ ոչ՝ այդ ես չըգիտեմ, բայց դու պատուով երդուել ես, որ եթէ ես տանեմ՝ դու յաւիտեան երկու բաժակից աւելի չըպիտի խմես և երբէք խաղաթուղթ ձեռքդ չըպիտի առնես։ Ես համոզւած եմ, որ դու

քո երկաթի բնաւորութեամբդ այդ ուխտդ չըպիտի դրժես։

ԲԱՐՍԵՂ—Իսկ եթէ դու չըկարողանաս տանել։

ԼԻԶԱ—Ե՞ս չըկարողանամ տանել . . . լա։

ԲԱՐՍԵՂ—Բայց ինչ համոզած եղանակով ես խօսում, կարծես գիտես, որ անպատճառ դու ես տանելու։

ԼԻԶԱ—Ես համոզած եմ։

ԲԱՐՍԵՂ—Ի՞նչպէս։

ԼԻԶԱ—Հրամեցէք (*ցոյց է տալիս աջ ձեռքի ցուցամատում եղած մատանին*)։

ԲԱՐՍԵՂ—Այդ ինչ ես արել։

ԼԻԶԱ—(*Ծիծաղելով*) Ես դիտմամբ մատանին այս մատս եմ դրել, որ չըմոռանամ։

ԲԱՐՍԵՂ—Ուրեմն դու գիւղացու պէս մատանին ցուցամատդ ես դրել, որ զգուշանաս ինձանից բան ընդունելիս։ Օ՜հ, այդ ինչ անմտութիւն է, Լիզա, միթէ մի «ջինաղ» քաշելու համար՝մարդ թոյլ կտայ իրեն այդ գռեհկական միջոցին դիմելու։

ԼԻԶԱ—Ինկատի ունեցիր, Բարսեղ, թէ ինչ պայմանով է քաշած այդ ջինաղը և ոչպիսի դառն յիշատակների հետ կապ ունի դա, յիշատակներ, որոնք յիշելիս՝ յաւիտեան պիտի սարսռամ։

ԲԱՐՍԵՂ—Բայց ես արդէն խոստացել եմ քեզ նոյնը. և եթէ իմանայի դու այդքան մեծ նշանակութիւն ես տալիս դրան, մինչև հիմա դիտմամբ տարած կըլինեի և չէի թոյլ տայ, որ դու գիւղացի

«խարս»-ի պէս մատանին ցուցամատդ դնէիր։

ԼԻԶԱ—Չէ, Բարսեղ, մենք աղնիւ խօսք ենք տուել միմեանց և յետոյ միայն «ջինաղը» կոտրել, հետևապէս՝ պարտաւոր ենք յարգել մեր պայմանը անկեղծօրէն։ Ասպետութիւնը պահանջում է՝ խոստման անխարդախ կատարումն. և որքան մեզանից իւրաքանչիւրս կաշխատի անխարդախ վարուել՝ նոյնքան և ճշտութեամբ կըկատարի իւր խոստումը։ Եթէ դու երբ և է դիտմամբ տարուես կամ չուզենաս ինձ խաբել, նշանակում է՝ նոյնքան անտարբերութեամբ էլ կըվերաբերուես դէպի պայմանի գործադրութիւնը։

ԲԱՐՍԵՂ—Այդպէ՞ս։

ԼԻԶԱ—Այո։

ԲԱՐՍԵՂ—Ուրեմն վստահ եղիր, որ «եաղ՝աստը» ես պիտի ասեմ . . .

ԼԻԶԱ—Տեսնենք . . .

ԲԱՐՍԵՂ—Պա՜-պա՜-պա՜-պա՜ . . . կնոջ պէս էլ ըծախնդիր արարա՜ծ . . .

ԼԻԶԱ—Այո, կանայք ըծախնդիր են, միայն բարի հարցերում։

ԲԱՐՍԵՂ—Լիզա, սիրելիս, թողնենք դրանք, պատրաստուիր, ես մի երկու ժամից կըվերադառնամ՝ գնանք պարոն Ամբարդանեանին այցելութեան, նա շատ խնդրեց. իսկապէս ես ուզում եմ այդ պարոնի հետ աւելի մօտ բարեկամ լինել։ Հա՛, նա խնդրեց

այլև, որ յայտնեմ, թէ մայրն ուզում է քեզ տեսնել։ Ինչ-որ, ասաց, կարևոր խօսելիքներ ունի . . .

ԼԻԶԱ—Հմ . . . ուրեմն ճիշտ է։

ԲԱՐՍԵՂ - Ի՞նչը։

ԼԻԶԱ—Մի՞թէ դու չըգիտես, որ Ամբարդանեանը իմ ընկերուհուս—Մարիամին ուզում է . . . Երևի մայրը կամենում է իմ կարծիքս հարցնել . . . Լաւ, Բարսեղ, ուրեմն շուտով եկ. ես պարոն Ամբարդանեանին չափազանց յարգում եմ, իսկ Մարիամին իմ հարազատ քոյրս եմ համարում։ Օ՜, ինչ հրաշալի զոյգ կը լինին, ո՞ւրբան ուրախ եմ։

ԲԱՐՍԵՂ—Ա՜յ գեղեցիկ բան. նշանակում է փառաւոր նշանդրէք կունենանք։ Ես մի ժամից կը գամ, դէ, դու էլ գնա շորերդ հագիր։ (Գնում է)։

ԼԻԶԱ—Լաւ, լաւ, շուտ եկ։ (Գնում է միւս դռնից։ Լռութիւն։ Մտնում է Վասիլ Ղարագեոզեանը)։

ՏԵՍԻԼ Դ.

ՎԱՍԻԼ առանձին

ՎԱՍԻԼ—(Գլխարկը ձգելով սեղանի վերայ)։ Հը՜, դա։ Շատ շտապով էր գնում պարոն Բարսեղը, երևի՝ դարձեալ կնոջ հետ կուռել է։ Բայց . . . ի՜նչ հրաշալիք է. աչքերը, կարծես, եղջերուի աչքեր լինին, որպիսի կախարդական փայլ, որպիսի գրաւչութիւն . . . քայլուածքը, կարծես, օ՜հ, կաքաւի հետ

միայն կարելի է համեմատել. իսկ շարժուածքը, նազանքը, կազմուածքը . . . Օ՜հ, հրեշտակ է, հրեշտակ . . . Բայց ո՞ւրբան հպարտ, ո՞ւրբան կամակոր . . . Փարիզի ու Վենետիկի գեղեցկուհիները, իրենց բոլոր գրաւչութեամբ, կարող են նսեմանալ սորա առաջ . . . Իսկ յամառութի՞ւնը . . . և այդ կարծես աւելի ու աւելի է քաշում մարդու, գրաւում դէպ ինքը։ Հոդեղէն չէ՞ նա, մի՞ շնաշխարհիկ էակ է, նա Ոլիմպիական է, մի դիցուհի, որի հայեացքին արժանանալն իսկ բախտաւորութիւն է։ Օ՜ . . . մի հայեացք, մի բառ միայն,—թող այդ բառը հայհոյանք լինի, թող նզովք լինի—այդ էլ բախտաւորութիւն է։ Հայնը, խօսուածքը՝ կարծես մուզիկայի քաղցրահնչիւն լարերի արբեցնող ներդաշնակութիւն լինի։ Օ՜հ . . . Լիզա, Լիզա, արժանացրու մի ժպտուն հայեացքի և ես կերկրպագեմ քեզ, իմ կուռքս կըդարձնեմ . . . Բայց ի՞նչպէս տեսնեմ նրան . . . երևի այժմ նընջարանումն է . . . ի՞նչպէս իմացնեմ։ Եթէ դարձեալ այն վայրենի ծառան գայ՝ նրա հետ գործ ունենալը դժուար է։ (Մի փոքր մտածելով եւ ձեռքը գրպանը տանելով) Ես կըտամ նրան մի 10-անոց և նա այս նամակը կըտայ իւր շնաշխարհիկ, անման, հրաշալի «խանումին», այս նամակը, որի մէջ բանաստեղծական վառ աւիւնով, սիրային նուրբ դարձուածներով, թովիչ և գրաւիչ ոճով նկարագրել եմ իմ դէպ ինքը տածած անհուն սէրս, այն

անշէջ կրակը, որ գիշեր-ցերեկ ինձ այրում, տոչորում է։ 10 մանէթանոցը տեսնելուն պէս՝ այդ ապուշ ծառան կըթողնի իւր վայրենութիւնը, այնուհետև իմ կամակատարս, իմ սարուկս ու գործիքս կըդառնայ . . . Օ՜հ, փողի ամենակարող ոյժի առաջ ոչ չի խոնարհուիլ։ (*Մտնում է Մաթոսը գիրկը չի վառելանցայտ եւ դնում ըուխարու առաջ*)։

ՏԵՍԻԼ Ե.

ՎԱՍԻԼ եւ ՄԱԹՈՍ

ՄԱԹՈՍ - (*Նկատելով Ղարագեօզեանին եւ տեղից վեր թռչելով*) Օհօ՜ . . . հէյ բարով ռաստ գանք ես ու դուն . . . Դու ինչ էիր խմանում, թէ ես օրթում եմ կերել՝ չէել քեզ տէնում ոչ՝ հէյ էս քաղքից ոտս դուս չի դնեմ։

ՎԱՍԻԼ—Ը՜ . . . ինչպէս է ձեր անունը։

ՄԱԹՈՍ – (*Հեգնօրէն*) Դմիթեմ քեզ ծառայ։ (*Կողմ*) Հէյ բանս աջա հա՜ . . .

ՎԱՍԻԼ—Ի՞նչպէս, Եփրեմ . . .

ՄԱԹՈՍ—Չէ՜ է, Դմիթեմ։

ՎԱՍԻԼ—Դա ինչ անուն է։ Հա՛, դա, խնդրեմ այս նամակը յանձնիր տիկնոջդ և յայտնիր իմ գալուստս։

ՄԱԹՈՍ—(*Կողմ*) Հէյ էս էր իմ ուզածը, լա՜։ (*Նամակը ծոցը դնելով*) Էս պամակը ալիս տամ էլի։

ՎԱՍԻԼ—Ո՛չ, ոչ, ոչ, խանումիդ։ (*Կողմ*) Է՜, խելագար է յիմարը։ (*Նրան*) Խանումիդ տուր և ասի՛ր՝ պարոն Ղարագեօզեանը մի կարևոր գործի . . .

ՄԱԹՈՍ—Պարոն Քեալլագեօզեանը . . . Հէյ իմ գիտենալով դու ֆռանդի թագին չէս, աղա։

ՎԱՍԻԼ - Դարձեա՛լ վայրենութիւն. լսի՛ր, պարոն . . .

ՄԱԹՈՍ—Պարոնը հէյ դու ես, քու հէրն ա, ռխիդ գեորա խոս

գալի, հրմի ուզում ես ձեռիցս դուս պրծնես . . . Է՜, խանըմիս պամակ ես գրել, համել տէնուլ ես ուզում . . . հլէ չի՛ ըլի իմանանք՝ ինչ հրաման ունես . . . (Ղարագեօզեանը սարսափած, ապուշի պէս ներանը ըաց նայում է)։ Ագա, խօսիր է։

ՎԱՍԻԼ—(Կուչ ու ծիգ անելով) Բայց, բայց, այստեղ դատարան կայ, ես քեզ ցոյց կըտամ։ (Կողմ) Էս ինչ փորձանք էր . . .

ՄԱԹՈՍ—Ասը՜դ . . . թէ որ ըստիան սաղ դուս գնաս՝ հլէ էն վօխտը դատա-մատարան գնայ։

ՎԱՍԻԼ—Ի՞նչպէս թէ՝ եթէ այստեղից սաղ դուրս գնաս։

ՄԱԹՈՍ—Հլէ ընհենց. ըսօր ըստեղ ես ու աղէս պտի քու «հոգոցն-հանգուցելոցն» ասենք . . .

ՎԱՍԻԼ—Վա՜հ . . .

ՄԱԹՈՍ—Հա-բա-ջա՜ն . . . Է՜, խանըմս աչքիդ դուրն ա էկել հա՛ . . . կարաս աղիս ճանպիցը հանես, մարդ ու կնկայ իրար խառնես. քու խաթրու տասը նհետ աղէս դլխիս բամփաչել ա, բա փոխը հանելու չեմ . . .

ՎԱՍԻԼ (Թախանձելով) Լսիր, պարոն, ես քեզ չեմ մեղադրում . . .

ՄԱԹՈՍ—Վա՜հ, հլա ըստո՜ւր . . . Տօ, դալաթնին դու անես, ըժու ինձ մեղադրես։

ՎԱՍԻԼ—Դու ը՜. . . . որպէս զի ուղացի, նահապետական վարք ու բարքի տէր մի անձնաւորութիւն, երևի սխալ ես հասկացել ինձ. եկ այդ

նամակս ինձ յետ տուր և թող գնամ, դու կարող ես զանազան թիւրիմացութիւնների առիթ տալ, որ լաւ հետևանքներ չեն ունենալ։ Նու, տուր։

ՄԱԹՈՍ—(Կողմ) Նեղն ա ընկել, ոնց ա լեզու ածո՜ւմ։ (Երան) Ո՜ւր գնաս, ժտրիցդ հանիր, հլէ քու գեօռը ըստեղ փորած պրծած ա, հրէս աղէս կըգայ քու ջանին . . . Հէնց էիր գիտըմ նրա աղ ու հացը կըլափես ու համել նրան մուխանաթուին կանես, նրա տան մէջ արին կըդնես, նրա ընտանուն խոռ աչքով մտիկ կանես ու համել կըմարսես։ Պրծա՜ւ քու բանը, ժամըդ դուս էկաւ։ Աղէս ամէն բան տեղին հրսկացաւ ու օրթում ա կէրել՝ որտեղ քեզ տէնու՝ ռբօլը հլէ ջիգեարիդ մէջն ա դըրդակելու։ Քեզ պտի պահեմ չէել աղէս դայ, հլէ ֆորսն իր ոտով դափանդն ա ընկել։

ՎԱՍԻԼ—Վա՜ . . . անկեղծ էք ասում, պարոն Եփրեմ։

ՄԱԹՈՍ—Սուտը դու ես ասըմ, ղըռշմալ։

ՎԱՍԻԼ—Ուրեմն՝ կեանքիս վտանգ է սպառնում . . . Պարոն Եփրեմ, եկ այս փորձանքից ինձ ազատիր, ի սէր Աստուծոյ, ինչ ուզում ես կըտամ. այստեղ, գիտես, այնպէս, մի փոքրիկ թիւրիմացութիւն կայ . . .

ՄԱԹՈՍ—Ես հլէ էդ զայդի զադերը հսկանըմ չեմ, էդ օձի լեզուվդ ինձ չես կարայ խաբիլ, ձեռիցս դուս պրծնիլ։

ՎԱՍԻԼ—(Շտապած) Ասա ինչ անեմ։

ՄԱԹՈՍ—Հոռը պինչդ արա. ադա դու մարդ ես, հառամ ըլի էդ փափախդ հա։

ՎԱՍԻԼ—Ինչ ուզում ես՝ ասիր, պարոն Եփրեմ, միայն թէ այդ նամակը Բարսեղի ձեռքը մի ձգիր, եթէ նա այդ կարդայ՝ հարցը բոլորովին այլ ընթացք կըստանայ . . . Նու, 'ի սէր Աստուծոյ, ազատիր ինձ այդ խայտառակութիւնից։

ՄԱԹՈՍ—Խայտառակութիւն . . . եանի դուք ըտոնք հրսկանում էք. հմի էլ ուշ ա, հլէ դրանք էլ խարջիս գալ չեն։

ՎԱՍԻԼ—(*Մօտենալով*) Ասիր, ինչ որ ասես՝ քո խօսքից չեմ դուրս գալ, միայն թէ կեանքս ազատիր։ Ինչքան տամ, ասիր, ասիր։ (*Գրպանից հանում է մի 25-անոց թղթադրամ*) Ա՛ռ, քիչ է, էլի կըտամ։

ՄԱԹՈՍ—(*Գլուխը թափահարելով*) Չէ՛, աղբէր, էդ ըսաեղ խարջի չի գնալ։ (*Կողմ*) Ամէն թահը կեղտոտութիւն անում են ու էդ անտէր փողի ուժով էլ եդը ծածկում. թու դրա մդոնողին էլ, դրան էլ . . . (*Նրան*) Էդ հլէ ձեղպէսներին կարայ մէյմունի պէս պար ածիլ, հլէ մենք աբուռով աշխատիլ, աբուռով էլ ուտիլ գիտենք։ Ուզում ես դրանով քու ճկատի մուրը իմ ճկատին կպցնուլ,—կարալ չես։

ՎԱՍԻԼ—Բա ինչ անեմ, հ՞ը։

ՄԱԹՈՍ—Ինչ պտի . . . Ըլիէնց կաց, եղնայ կասեմ, հրէս որտեղ որա աղէս կըդայ, հլէ շատ չի ետանալ, վախիլ մի։

ՎԱՍԻԼ—Վա՜հ . . .

ՄԱԹՈՍ—Բա՜ . . .

ՏԵՍԻԼ Զ.

Նրանք եւ ԼԻԶԱ

ԼԻԶԱ—(*Մտնելով եւ չընկատելով Ղարագեոզեանին*) Ո՞ւմ հետ էիր խօսում, Մաթոս։

ՄԱԹՈՍ—Հրէն է՜, խանում, հլէ քեզ տէնուլ ա ուզում։

ԼԻԶԱ—(*Տեսնելով Ղարագեոզեանին՝ զզւանքով յետ է քաշւում եւ ըոպէապէս արձանացած*) Ա՜խ . . .

ՄԱԹՈՍ—Վախիլ մի, խանում ջան, ես ըստի չեմ, հլէ խի՞ ես վախում։

ԼԻԶԱ (*Խրոխտ*)—Ի՞նչ գործ ունիս դու այստեղ, պարոն։

ՄԱԹՈՍ—Խանում ջան, քեզ տէնուլ ա ուզում, համ էլ մի գիր ա տուել, որ քեզ տամ։ (*Ղարագեոզեանին*) Արա, խի՞ ես լռիւել, խանումն ա է՞։

ՎԱՍԻԼ—(*Ցանկարծ սթափւելով եւ գլխարկը վերցնելով*) Ներեցէք, ը՜ . . . յարգելի տիկին։ (*Մաթոսը քաշւում է դռան կողմը եւ Ղարագեոզեանի խօսելու ժամանակ երբեմն բոռնցքը ցոյց տալիս, որը նկատելով այդ՝ ընդհատում է խօսքը*)։

ԼԻԶԱ—Վերջապէս, պարոն, ինչ էք կամենում,

ինչու էք հալածում մեզ, ինչու էք խանգարում մեր ընտանեկան քաղցրութիւնը, ինչու . . .

ՎԱՍԻԼ—Աղնիւ տիկին, (Նկատելով Մաթոսի ըոունցքը) ե . . . ե . . . ես . . .

ԼԻԶԱ—Մինչև հիմա դուք ինձ դժբախտացրել էիք՝ լարելով միամիտ և բարի ամուսնուս իմ դէմ, վրդովել էիք մեր ընտանեկան քաղցրութիւնը, դառնացրել և թշուառացրել էիք նորատի ամուսինների կեանքը, հիմա ինչ էք ուզում անել. ինչու է մեռել ձեր մէջ խիղճը, մարդկային բարոյական զգացմունքը . . .

ՎԱՍԻԼ—Բայց, ներեցէք տիկին, (Նկատում է ըոունցքը) ե՞ս . . .

ԼԻԶԱ—Հաղիւ ամուսինս զգացել է իւր սխալը, հաղիւ հասկացել է ձեր նենգամտութիւնը, հիմա էլ կամենում էք մեր կեանքը թունաւորել մի նոր դժբախտութեամբ։ Հեռացէք 'ի սէր Աստուծոյ այստեղից, եթէ ամուսինս ձեզ այստեղ տեսնի՝ կտո՞ր-կտոր կանի ձեզ և մենք նոր փորձանքի մէջ կընկնենք, նորից կը դժբախտանանք. հեռացէք այստեղից . . .

ՎԱՍԻԼ—Ներեցէք ինձ, աղնիւ տիկին, ես մեղաւոր եմ . . . ե՞ս . . . ե՞ . . . ս (Նկատում է ըոունցքը)։

ԼԻԶԱ—Ես չեմ կամենում ձեզ լսել . . . ես սարսափում եմ ձեր ձայնը լսելիս, շուտով հեռացէք այստեղից . . .

ՎԱՍԻԼ—(Մօտենալով Լիզային) Ես մեղաւոր եմ ձեր առաջ . . . ես . . .

ՄԱԹՈՍ—(Ելա թեւից ըռնելով եւ յետ քաշելով) Էդ զադա համարձակութիւն, է՞յ . . . հոգիդ աչքերիցդ կըհանեմ, հլէ հեռու կաղնի՝ ընհենց խօսիր . . .

ԼԻԶԱ—Մաթոս, քաղաքավարի . . . ճանապարհ դիր այդ պարոնին . . .

(Դրսից լսւում է Բարսեղի ձայնը, որ ա՛սում է. «Այո՛, մէնք էլ շո՛ւտով էլեֆանտ»)։

ՄԱԹՈՍ—Խանըմ ջան, հլէ աղէն ա, էկաւ։

ԼԻԶԱ—Վա՞յ . . . ինչ անենք . . . այստեղ արիւնհեղութիւն կըլինի։

ՎԱՍԻԼ—(Յուսահատ) Խղճացէք, փրկեցէք, 'ի սէր Աստուծոյ, կեանքս փրկեցէք (Շարած դիմելով երբեմն Լիզային, երբեմն Մաթոսին)։

ԼԻԶԱ—Աստուած իմ, կսպանի՞սրան, ինչ անենք։

ՄԱԹՈՍ—Ջհանդամը կսպանի, խանըմ ջան, սիրտդ դայիմ պահի, վախիլ մի, ես ընհենց թաղեմ, ընհենց տափսաղաղ անեմ, հլէ ոչով իմանայ ոչ։

ՎԱՍԻԼ—Վա՞հ . . . 'ի սէր Աստուծոյ . . . (Զանազան շարժումներով եւ ձեւերով թախանձում է)։

ԼԻԶԱ—(Ցանկարծ մտաբերելով եւ վազելով դէպի պահարանը, բացում է բանալիով) Մտիր, մտիր այստեղ . . .

ՎԱՍԻԼ—Հա՛ . . . Անչափ շնորհակալ եմ. երբէք չեմ մոռանայ ձեր արած այս բարիքը։

ՄԱԹՈՍ—(*Նրա թեւից բռնելով եւ հրելով պահարանի մէջ*) Այդ, մուտ ընդ մէջ ըզդուլթուն, ջօխ սոյլամա։

ԼԻԶԱ—(*Փակելով*) Դ՝ սէր Աստուծոյ, Մաթոս, աղայիդ ոչինչ չասես, եթէ ոչ՝ կսպանի, մենք արիւն-տէր կըդառնանք։

ՄԱԹՈՍ—(*Նշանացի հասկացնելով, թէ՝ չի ասիլ*) Չէ մինակ պամակը կը տամ։ (*Պահարանի մէջ Զարագեօզեանը սարսափում է*)։ Է՞յ, Գուանդի թազի, հէյ ժաժ դաս ուչ, թէ չէ «ֆոկոցդ» կասենք։

ՎԱՍԻԼ—Դ՝ սէր Աստուծ . . .

ՄԱԹՈՍ—(*Զարկելով պահարանի դրան*) Զէ՞նդ, ախմա՞խ . . .

(*Մաթոսը դուրս է գնում, Լիզան նստում է դիւանի վրայ*)։

ՏԵՍԻԼ Է.

Նրանք եւ ԲԱՐՍԵՂ

ԲԱՐՍԵՂ—Մաթոս, ո՞ւրտեղ ես, տո . . .

ՄԱԹՈՍ—Չէ ըստեղ եմ, աղա ջան։ (*Նրա ետեւից ներս մտնելով*)։

ԲԱՐՍԵՂ (*Ուրախ-ուրախ դէպի Լիզան*) Հ՞ը, պատրաստ ես, սիրելիս, գնանք . . .

ԼԻԶԱ—Ճիշտն ասած՝ տրամադրութիւն չունիմ, Բարսեղ . . .

ԲԱՐՍԵՂ—Հ՞ը, ինչու, ինչ է պատահել, դու այլայլած ես երեւում։

ԼԻԶԱ—Ոչինչ, այնպէս . . . տրամադրութիւնս լաւ չէ։

ԲԱՐՍԵՂ—Երեւի մրսել ես. հիւանդ հօ չես, ինչդ է ցաւում։ (*Մօտենում է եւ նրա ճակատը բռնում*)։

ԼԻԶԱ—Չէ, Բարսեղ, հաւատացած եղիր՝ հիւանդ չեմ։

ԲԱՐՍԵՂ—Ուրիշ կերպ ես երեւում աչքիս . . . Հ՞ը, ուզարկեմ բժշկի ետեւից։

ԼԻԶԱ—Բժիշկ չէ, հոգեբանի ետեւից . . . ինչքա՞ր ես ասում։

ՄԱԹՈՍ—(*Մատով թխկացնելով շկաֆը*) Քէֆըդ ինց ա, բարեկամ . . .

ԲԱՐՍԵՂ—Ասա, խնդրում եմ, սիրելիս, ինչ է պատահել քեզ։

ԼԻԶԱ—Ճիշտն ասած, Բարսեղ, ես չեմ ուզում ոչինչ դաղտնիք ունենալ քեզանից. նստիր այստեղ և լսիր։ Ես համոզուած եմ, որ ամուսիններին մէջ գաղտնիք չըպիտի լինի. երբ կինը կարող կըլինի մարդուց ամենաչնչին գաղտնիքն ունենալ, նա կարող է դրանով վարժուել՝ աւելի մեծ գաղտնիքներ ունենալու, իսկ այդ կարող է խախտել ընտանեկան անկեղծութիւնն ու հաւատարմութիւնը։

ԲԱՐՍԵՂ—Ես էլ ճիշտ նոյն համոզմունքն ունիմ, յետոյ . . .

ԼԻԶԱ – Ես պիտի ասեմ քեզ մի մեծ գաղտնիք, բայց երդիր, որ ամենևին չըպիտի վրդովուես և սառնարիւն կերպով պիտի լսես։

ԲԱՐՍԵՂ – Ա՛յ տղայ, Մաթոս, դուրս գնա . . .

ԼԻԶԱ – Ո՛չ, թող այստեղ լինի, նա էլ գիտէ այդ գաղտնիքը . . .

ՄԱԹՈՍ – (Զարմացած նրա այդ վարմունքից) Հլէ՞ . . .

ԼԻԶԱ – (Նշանացի լռեցնելով) Կաց, Մաթոս . . . Հա՛, Բարսեղ, դու պիտի երդուես՝ անտարբեր լինել . . .

ԲԱՐՍԵՂ – Լիզա, կատակ ես անում . . .

ԼԻԶԱ – Ո՞չ, տեսնում ես լուրջ եմ խօսում։

ԲԱՐՍԵՂ – Է՞հ, գնանք, Լիզա, ուշանում ենք, ճանապարհին կասես . . .

ԼԻԶԱ – Ես պահանջեցի անտարբերութիւն, բայց ո՛չ այնքան, որ չես ուզում ինձ լսել իսկ։ (Մաթոսը կամացիկ թիկացնում է շկաֆը, Ղարագեօզեանը սարսափում է)։

ԲԱՐՍԵՂ – Ասիր, սիրելիս, ես լսում եմ քեզ։

ԼԻԶԱ – Երդուիր, Բարսեղ, խնդրում եմ, երդուիր իմ անունով, որ անտարբեր պիտի լինիս։

ԲԱՐՍԵՂ – Լաւ, երդւում եմ քո անունով, որ անտարբեր պիտի լսեմ . . .

ԼԻԶԱ – Հա՛, լաւ . . . Գիտես, այսօր քո բարեկամ պարոն Ղարագեօզեանը նորից եկել էր

մեր տուն։ (Զարմացք Մաթոսի եւ սարսափ Ղարագեօզեանի կողմից)։

ԲԱՐՍԵՂ – Այն հրէշը մեր տունն . . .

ԼԻԶԱ – Օ՜ . . . այդ չեղաւ, դեռ ոչինչ չասած՝ գրգռւում ես . . . Է՞հ, ուրեմն ես այլևս չեմ շարունակի . . .

ԲԱՐՍԵՂ – Ասի՛ր, խնդրում եմ, Լիզա, յետոյ . . . Նու ասիր, ես կըլռեմ . . .

ԼԻԶԱ – Հա՛, եկել էր մեր տուն։ Ես յանկարծ մտնում եմ այս սենեակը և տեսնում այս մեր խելօք Մաթոսը նրան . . . (Բարսեղը նայում է Մաթոսին։ Մաթոսն ասում է. „Հլէ“ . . . բայց Լիզան նշանացի հասկացնում է նրան, որ լռի։ Մաթոսը շարունակ զարմացք է արտայայտում)։

ԲԱՐՍԵՂ – Է՞, յետոյ . . .

ԼԻԶԱ – Պարոնը երբ ինձ տեսնում է՝ մօտենում և . . .

ԲԱՐՍԵՂ – Դէ ասիր, Լիզա, ինձ մի սպանիր, յետոյ . . .

ԼԻԶԱ – Դու դարձեալ գրգռւում ես, Բարսեղ, եթէ այդպէս է՝ չեմ շարունակի, ուրեմն դու իմ անունովս սուտ երդուեցիր։

ԲԱՐՍԵՂ – Նու, մի տանջիր, Լիզա, ասիր 'ի սէր Աստուծոյ, յետոյ . . .

ԼԻԶԱ – Չէ՛, Բարսեղ, այդ լաւ բնաւորութիւն չէ, դու դարձեալ շարունակում ես գիւրագրգիռ լինել . . .

ԲԱՐՍԵՂ—Լաւ, Լիզա, չեմ գրգռիլ, միայն խնդրում եմ ասիր . . . յետոյ։

ԼԻԶԱ—Ի՞նչ յետոյ, յետոյ էլ այն, որ նա ուզում էր խօսել, ինչ-որ „Ագնիւ տիկին“ „ագնիւ տիկին“ յորջորջել, բայց ես թոյլ չը տուի խօսելու և պահանջեցի, որ դուրս կորչի . . .

ԲԱՐՍԵՂ—(*Մաթոսին*) Հ՞ը, սատկես դու, բա չը կարողացար շանսատակ անես . . .

ՄԱԹՈՍ—Հէյ, ադա ջան, խանդմը թողուց ոչ . . . ուզում ես հրմի քլօլեմ։

ԼԻԶԱ—(*Մաթոսին*) Լռիր . . . (*Բարսեղին*) Հա, յանկարծ լսեցինք քո ձայնը և վախեցանք՝ մի՛ գուցէ արիւն ձգես այս տան մէջ և հաղիւ մի քանի օր է՝ որպէս ճշմարիտ ամուսիններ, իրար հետ քաղցր, երջանիկ ապրում ենք, մի նոր դրժբախտութեան մէջ ձգես մեզ . . . ես ու Մաթոսը թագցրինք, որ դու չը տեսնես։

ԲԱՐՍԵՂ—Ուրեմն նա այստեղ է։ (*Ցուցած դուրս քաշելով զրասեղանի արկղը եւ վերցնելով ատրճանակը*) Ցոյց տուր ինձ, Լիզա, 'ի սէր Աստուծոյ, ցոյց տուր ինձ, թող այս վեց գնտակը նրա կուրծքը լցնեմ՝ մի սիրտս հովանայ, թող այնուհետև ինձ Սիբիր տանեն, թող ինձ կախաղան բարձրացնեն։

ՄԱԹՈՍ—(*Դէպի պահարանը*) Ադա, հաղրւիր, հլէ ուրօլն էկաւ ջանիդ։

ԲԱՐՍԵՂ—Ասիր, Լիզա, ո՞ւր է այն հրէշը, ցոյց տուր։

ԼԻԶԱ—Ահա այդ շկաֆի մէջն է, այս էլ քեզ բանալին։

(*Բարսեղը՝ մի ձեռքին ատրճանակը, միւս ձեռքով յափշտակում է Լիզայի ձեռքից բանալին*)։

ԼԻԶԱ (*Բանալին տալու ժամանակ ծափ տալով եւ ծիծաղելով*) „Եադ՛ա՜ստ“։

(*Բարսեղը մնում է ապշած, բանալին ձեռքից ընկնում է*)։

ՄԱԹՈՍ—(*Զը կարողանալով ինքն իրան հաշիւ տալ*) Եա՜հ . . .

ՎԱՐԱԳՈՅՐ

ՑԵԿ. ՂԱԶԱՐԵԱՆԻ ԵՐԵԽԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

ՏՊԱԳՐՈՒԱԾ ԵՆ

ԹԱՍԻԲ, Տաճկահայերի կեանքից . . . 20 կոպ.
ԳԻՒԼԷ, Քրդական կեանքից . . . . . 15 կ.
ՓԷՐՕ, Քրդական կեանքից . . . . . 15 կ.
ԽՈՒՆ-ԽՈՐ, Տաճկահայերի կեանքից . 60 կ.
ՄԱՆԿԱԿԱՆ ԲԵՄ Ա. . . . . 15 կ.
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ, Մանկ. բեմ Բ. . . . 10 կ.
ԵԱԴԱՍՏ, վօդ. մէկ արարուած. . . . . 25 կ.
ՊԱՏԱՆԻ ՀԻՐՈՍԸ, Հայ լեռնակ. կեանքից.

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ

ՏԱԳՐԷ ՍԻՄԸՐ, Քրդական լէգէնդա
ԱՈՒԶԷԹ, Քրդական կեանքից.
ԻՓԱՐԻ ԱՍՕՆ, Տաճկահայերի կեանքից.
ՁԱՓՕ, Քրդական կեանքից.
ԱԶԳԱՑԻՆ ՍԱՑԼԸ, պարսկահայերի կեանք։

Դիմել՝ Тифлисъ, Книжн. Магазинъ «Гутенбергъ».

«Ազգային գրադարան»
NL0352125